

Lt. n
V 962

1999

Միջայ Տz — 361-ի
" շրջ. ար. — 373-ի
" սպաստիք - 386-ի
Կունցիկ Ձm 395-ի
Հարդար 405-
Բակ — 440.

ՄԱՏԵՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ն Ա Խ Ն Ե Ա 8

ԿՈՐԻԻՆ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Միջայ . — Տz. 400 p.
Հարդար 2131 p.
Ալիսար 466-ի

ԿՈՐԻՒՆ


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ

ՄՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԵՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՁԻ

967



ՅԱՌԱՋԱԲԱՆ



Ի ՅԻՇԱՏՈԿ ՆԵՓԻՍԵԱՆՑ
Ո.Զ.ԳԱՏՈՀՄԻՆ

28. 964


4962-60

ՅԱՌԱՋԱԲԱՆ տպագրութեան Պատմութեանս կո-
րեան, յամի 1834, ծանուցեալ էր այսպէս.

«ԿՈՐԻԴՆ Վարդապետիս, որ ի դարմն անդ լուսաւոր ի-
մաստութեամբ պայծառացեալ՝ պատուեցաւ Աքանչելի ա-
նուանակոչութեամբ, մի միայն վաստակն ենաս առ մեզ ՊԱՏ-
ՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՅ ԵՒ ՄԱՀՈՒՄՆ ՄՐԲՈՅՆ ՄԵՄՐՈՊԱՅ, որով
քան զմատենայած հմտութեամն՝ զերախտագիտութեան
իւրոյ եւեղող յետնոցս զիշատակ. զի ոճով պատմէ զիեն-
ցաղ սքանչելի վարդապետին իւրոյ, եւ զիանգամանս Գիւտի
գրոցս, եւ զիոյթ այնր ժամանակի որերոյն ի բարգաւաճել
զուսումն յազգին։ Ի պատմութեան աստ իւրում ճարտա-
րութեամբ իմն զբազում տիպս բանից Ագաթանգեղոսի և
զբուզանդայ ի վար արկանէ։ Բայց մեզ կարծելի է թէ
եւ այլ շարագրածք իցեն քաջի մատենագրիս, զոր հնու-
թիւն ժամանակաց ի միգապատ ամպս մթութեան ծած-

կեալ պահէ։ Պատմութեանս այսորիկ կրկին էին առ մեզ անմուշական եւ նօտրագիր օրինակը՝ գաղափարեալք ի հին եւ ի վաւերական օրինակաց, որ եւ չէին քնառ ի վը-րիպանաց զերծ, յորոց զյայտնի թուեցեալսն մեզ ուղղեալ ծանօթս տալով ստորեւ իջիցն, զայլն յանմնեցաք ժամա-նակին»։

Ժամանակին յայտնեաց մեզ ընտիր եւ հարազատագոյն օրինակ մի Պատմութեան կորեան՝ ի ստուար եւ հնագիր (ժբ դարու) ձառնորի մեջի գրատան Պարիսու, զոր եւ քառասուն ամաւ յառաջ հրատարակեալ էր մեր ի շարս Սովերաց մերոց (թիւ ժԱ). Եւ զնոյն արդ կարգեմք աս-տանօր ի ներքոյ առաջնոյ երկարաբան հետեւակ գրուածոյն, ի բաղդատութիւն եւ ի քննութիւն բանասիրաց մերոց։



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Վ Ա Ր Ո Ւ Ց Ե Ւ Մ Ա Հ Ո Ւ Ա Ն

Ա Յ Ա Խ Ա Ե Լ Ի Ո Յ Ս Ր Բ Ո Ւ Յ Ա Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ի

Մ Ե Ր Ո Յ Ց Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ի

Ի Կ Ո Ր Ի Ւ Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Է

Յ Ա Շ Ա Կ Ե Ր Տ Է Ն Ո Ր Ի Ւ



Ա Զ Ք Ա Ն Ա Զ Ե Ա Ն ա զ գ ի ն և Հ ա յ ա ս տ ա ն ա շ խ ա ր-
հ ի ն զ ա ս տ ու ա ծ ա պ ա ր գ ե ւ գ ր ո յ ն, ե թ է
ե ր բ և յ ո ր ծ ւ մ ժ ա մ ա ն ա կ ի մ ա տ ա կ ա ր ա ր ե-
ց ա ւ, և ո ր պ ի ս ի ա ր ա մ ի ա յ ն ա լ ի ս ի ն ո ր ո դ ա տ ո ւ ր
ա ս տ ո ւ ա ծ ե ղ է ն չ ն ո ր հ ս ե ր ե ւ ե ց ա ւ. և վ ա ս ն ն ո-
ր ի ն լ ո ւ ս ա ւ ո ր վ ա ր դ ա պ ե ս ո ւ թ ե ա ն, և հ ր ե շ տ ա կ ա-
ր ա ր կ ր օ ն ի յ ն ա ռ ա ք ի ն ո ւ թ ե ա ն, զ մ ո ւ ա ւ ա ծ ե լ ո վ յ ի-
շ ա տ ա կ ա ր ա ն ս ա ռ ա ն ձ ի ն մ ա տ ն ա ն շ ա ն ¹ ծ ա զ կ ե ց ու-
ց ա ն ե լ. ե ւ մ ի ն չ գ ե ռ ա ն դ է ն ի խ ո ր հ ր դ ա ն ո ց ի մ ը-

Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Ա Ր Ո Ւ Ց

Ե Ր Ա Ն Ե Լ Ի Ո Յ Ս Ր Բ Ո Ւ Յ Ա Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ի Մ Ե Ս Ր Ո Վ Բ Ո Ա Ց

Զ Ո Ր Ա Ս Ա Յ Ե Ա Լ է Ն Ո Ր Ի Ն Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ի

Կ Ո Ր Ե Ա Ն

Զ Ա Մ Բ Ա Ն Ա Զ Ե Ա Ն ա զ գ ի ս և զ շ ա յ ա ս տ ա ն ա շ խ ա ր հ ի ս զ ա ս տ ո ւ ա ծ ա-
տ ո ւ ր չ ն ո ր հ ս, զ գ ր ո յ ն գ ի ւ ս, և զ լ ա ր դ ա պ ե տ ո ւ թ ե ա ն ն պ ա ր գ ե ւ
՚ ի Տ ե ա լ ա ն է տ ո ւ ե ա լ, (թէ յ ո ր ծ ւ մ ժ ա մ ա ն ա կ ի և ո ր պ ի ս ի ա ր ա մ ը
լ ո ւ ս ա ւ ո ր վ ա ր դ ա պ ե տ ո ւ թ ե ա մ ը, պ ա տ մ ե ս ց ո ւ ք ձ ե լ, և զ ն ո ր ի ն
հ ր ե շ տ ա կ ա կ ր օ ն վ ա ր ս ա ռ ա ք ի ն ո ւ թ ե ա ն :

տացու՝ վասն յուշ արկանելոյ միայնագործ հոդացայ, եկեալ հասանէր առ իս հրաման առն միոյ պատուականի՝ Յովսէփ կոչեցելոյ, աշակերտի առն այնորիկ. և ընդ նմին այլոց եւս քաջալերութիւն աշակերտակցաց մերոյն վարդապետութեան: Ուստի և իմ մասնաւոր աշակերտութեամբ վիճակ առեալ, թէպէտ և էի կրսերագոյն և առաւել քան վկար մեր, գրաւեալ անաշառ հրամանին հասելոյ, վութանակի և առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել: Զորս և մեր համօրէն աղաչեալ երկախառնել ընդ մեղ աղօթիւք՝ յանձնարարութեամբ աստուածեղէն² չնորհացն, զի կամակարագոյնս և ուղղագոյնս նաւեցեմք զհամատարած ալեօքն վարդապետական ծովուն:

Եւ արդ առեալնախաբանեսցուք, եթէ իցէ համարձակութիւն գրով նշանակել զվարս արանցն կատարելոց. ոչ ի մէնջ արուեստախօսեալ մերոյն կարծեօք վիճաբանելով, այլ յօրինակացն տուելոց զընդդիմակացն բարձրացուցանել: Քանզի Աստուծոյ բարերարին այսպէս բարեխորհեալ զիւրոց սիրեեաց, ոչ միայն ըստ առաքինութեան վարուց՝ զշքնազ և զբարձրագոյն հատուցումն բաւական համարել յանսպառ յաւիտեանմն, այլ և աստէն իսկ կանխագոյն. զի անցաւոր ժամանակօքս մատենապատում երկնարերձ պայծառացուցեալ, զհոդեղինացն և զմարմնականացն առ հասարակ փայլիցեն:

Եւ ի մնվսիսական պատմութեան յայտնի է երանեեաց արանցն ազնուականութիւն, ճշմարտութեան հաւատոցն հաստատութիւն, աստուածամերձ աստուածամուխ կենացն վայելչութիւն, սքանչելական կենացն պայծառութիւն: Զի ոմն ընդունելի պատարագաւ՝ արդար կոչեցեալ. եւ այլ ոմն հաճոյական արուեստիւ ի վերայ ամենակրու մահուանն կենօք երեւեալ, և միւս ոմն բովանդակ արդարութեամբ ի վերայ համատարած լեռնացելոյ

աստուածապատիժ ծովուն, հանդերձ ամենայն շընչականօք տարեւոր ժամանակօք նաւակաց պահեալ. և միւսոյն յանկարծագիւտ հաւատովք արդարացեալ, աստուածամերձ աստուածախօս դաշնաւոր կատարեալ, և զաւետիս հանդերձելոց բարեացն ժառանգեալ: Բազմօք և այլ նոյնպիսիք աստուածածանօթ գտեալք. որոց ազնուականութիւնքն յամենայն աստուածածանօթ գրոց պատմի: Հանգոյն ասացելոյս երանելոյն¹ Պաւլոսիառ Երբայեցինկարգեալ զանուանս՝ գովիչ զնոցին ճշմարտութիւն հաւատոցն. որով զվարձահատոց միխթարութիւնընկալան յամենապարբեւողէն Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յառաջադիմութեանցն. նա և զժանդագործին բահարու զհիւրընկալութիւն լրտեսացն՝ համեմատէ:

Խսկ իբրև հայեցեալ ի բազմախուռն գումարութիւն, արդարեւ զակաւուցն զանուանս յայտ առնէ. և զայրովք եւս զանց առնէ, անբաւական զժամանակն առ ի կարգի պատմելոյ: ի կիր արկանէ այնուհետեւ նշանակել միանգամայն զիորձութիւնս ի վերայ յարձակեալս. և նոցա զանընդդիմակաց զնահատակութիւնսն, զորս և պատուականս քան զաշխարհս առ վաճառ համարի: Սոյն օրինակ և ամենայն զիբրձ հոգեպատումք՝ նշանակեալ ունին զքաջութիւնս ամենայն զօրաց. զոմնաց՝ ըստ աստուածեղէն կրօնիցն զբարեյազթութիւն, և զոմնաց՝ ըստ աշխարհագիր² կարգաց զմարտից և զպատերազմաց արութիւնսն. որպէս զնեբրտացն և զյամիսունին և զդաւթայն: Եւ զոմնաց զբնական զիմաստութիւն գովեալ աստուածեղէն իմաստութեամբն հանդերձ. որպէս զթովսեփայն յեղիսլոտոս, և զդանիէլին ի Բաբելոն: Յորոց և հզօր թագաւորացն խրատիչք էին, զաշխարհակալ կենցազոյս դհանգամանսն ցուցանէին, հանդերձ ամենիշխանին Աստուծոյ ծանօթս առնելով: Զորոց և մարդարէին

իսկ գովեալ զիմաստութիւնն, առէր ցոմն այսպէս. « Մի՛թէ իմաստնագոյն իցես քան դժանիէլ. կամ իմաստո՞ւնք խրատեցին զքեղ հանճարով խրեանց » : Եւ ոչ այսափ միայն. այլ և հոգեկան ազգին հրեշտակութեամբ՝ գովեալ զսրբոյն զօրութիւն, որ զԴանիէլ ցանկալի քարողելովն կոչէին. և զսուրբ Տիրամայրն ի Գալիլեայ՝ օրհնեալ ի կանայս :

Բայց զի՞նչ ասիցեմք զզուգանացն զառ ի միմեանց պատուեալ զգովութիւնս. զորոց և Տէրն իսկ ամենայնի՛ բերանալիք գոչէր զազնուականութիւնն. ոչ միայն զյանդիմանական գործոյն, այլ և զծածուկ սրտիցն լուսաւորութիւնս¹, առաջի հրեշտակաց և մարդկան բերէ : Որպէս զհիւրամեծարին Աբրահամու, հրեշտակօքն հասելովք զծառայական հաւասարութիւնն յայտ արարեալ. պատմելով նմայետ աւետեացն ընկալելոց, զինչ ի Սոգոմն էր գործելոց : Նոյնպէս և զքաջի նահատակին Յոբայ յառաջ քան զպատերազմել առաջի պատերազմականին՝ յօրինէ զգովութիւն ասելով. « Այր ճշմարիտ արդար և աստուածապաշտ, և որոշեալ յամենայն գործոց չարաց » : իսկ մեծին Մովլէսի զառաւելագոյն զաստուածամուխ մերձաւորութիւն՝ ամենայն եկեղեցական գրով հնչեցուցեալ. զորոց և զորդայութեան զկայտառութիւնն յայտ արարեալ աստուածեղէն օրինացն. նա և զայլազգոյն զՅոթորի եւս զիսրատն՝ չանցուցեալ անդիր :

Եւ այնպէս միահամուռ ամենայն աստուածակրօն արուեստականացն բարեգործութիւնք՝ փայլեն² յաստուածագիր օրինացն, զորոց չէ ոք բաւական յիշատակել զերանելի անուանց գումարութիւն : Եւ ոչ միայն զյառաջագունիցն, այլ և զկնի եղելոցն՝ զՄիածնի որդւոյն Աստուծոյ Փրկչին ամենեցուն, ի լուսաբեր աւետարանին իւրում ծագիեցուցանէր զազնուականութիւնս, մանաւանդ երանութեամբ

իսկ պսակէր. ոչ միայն սեպհականացն զերկոտասաննիցն, և կամ զյառաջամուտ զկարապետին, այլ եւ զայլոց մատուցելոցն՝ գովէ և զհաւատոյն ճշշմարտութիւն : Քանզի զԵաթանայէլ առանց նենդութեան նշանակէ . և զթագաւորազին զմեծութիւն հաւատոցն՝ անդիւտ յիսրայէլի ասէ : Բայց ոչ միայն զմեծամեծսն, այլ առաւել եւս զթեթեւագոյնսն բարձրագոյնս՝ անարգամեծարն Քրիստոս, որ սակաւիկ ինչ զծախ իւղոյն յարգէ . և զծախելեացն յիշատակարան պատմեն ամենայն ուրեք՝ առ ի ներքոց երկնից : Եւ զկնոյէն քանանացւոյ մեծ զհաւատոցն ասէ. նաեւ զգանկաց երկուց ընծայելոցն՝ գովէ զարկանելեացն³ զյօժարութիւն առաւել քան զմեծացն : իսկ Պաւղոսի մտի եղեալ էր շրջնցուցանել զքրիստոսագիր կարգացն պայծառութիւնն, անօթը ընտրութեան անուանեալ, անուանակիր յաշխարհի իւրոյ սքանչելի անուանն առնէ :

Վասն որոյ երանելոցն հայեցեալ ի չնորհացն բարձրութիւն առ իւրոյ մեծ օրինացն, և առ ամենայն սրբոցն, բարձրագոյն բարբառով ի փառատրութիւն² գառնայ. եթէ « Շնորհք Աստուծոյ, որ յամենայնի հոչակ հարկանէ զմէնջ ի Քրիստոս. և զհոտ գիտութեան իւրոյ յայտնի առնէ մեւք յամենայն տեղիս » : ի վերայ այնորիկ ապա և զհամարձակագոյնն բերէ, թէ ո՞ կարէ բիծ դնել լնտարելոց Աստուծոյ : Եւ զայս օճան ընկալեալ ի Տեառնէ երանելի առաքելոցն, զամենայն զործակցաց իւրեանց գրով նշանակել զքաջութիւնս. տեսանել զոմանց ի սուրբ աւետարանին և զոմանց ի զործս առաքելոցն՝ երանելոցն Զուկասու մատենագրեալ . և իցեն որ ի կաթուղիէս առաքելոցն առաւելագոյնս ճանաչին :

Այլ Սրբոյն Պաւղոսի չորեկտասանեքումէք թըղթովլք պատմէ զիւր առաքելակիցս, և նիզակակիցս

¹ Յերկոսին յօրինակոն ևս զարդարելեացն . թերեւս ոյրեացն պիտէր :

² Միւս օրին . Քայլէն իւրութեան :

³ Միւս օրին . յարէ և, զի՞րծակիցս :

և ուրախակիցս իւր առնէ. և ի վախճանի թղթոցն, ըստ իւրաքանչիւր ումեք յոդջոյն կատարեալ՝ յանուանէ հարցանէ. և զուրումն յաւետարանէ անտի նշանակէ զգովութիւնմն։ Բայց ոչ միայն զերանելոյն զօդնականութիւնսն յարգէ, այլ և զքրիստոսամեծար ասպենչականիցն իւրոց՝ բազում գովութիւնս փոխանակ մեծարանացն կարգէ, վասն որոյ և յաղաշանս առ Աստուած մասուցեալ՝ զփոխարէն բարեացն հասուցանել հայցէ։ Եւ ամենայն եկեղեցեաք հնչեցուցանէ զընտրեալոցն զագնուականութիւն։ ոչ միայն զարանցն՝ այլեւ ըդկանացն աշակերտելոց¹, որ զծմարտութիւնն աւետարանեն։

Եւ զայս ամենայն աւետարանեալ ոչ ի պարծանս գովութեան, այլ զի օրինակ և կանոն զինի եկեղեցն պաշտիցի. որպէս ի նոյն իսկ զի² բարեաց գործոց նախանձաւոր լինել ամենեցուն՝ ստիպէ ասելովն, թէ « Զհետ երթայք սիրոյ. և նախանձաւոր լինել ամենեցուն հոգեւորացն »³։ Որոց զյօժարութիւն Աքայեցոց վասն պաշտաման որբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալ յորդորեաց։ Այլեւ համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւն։ թէ « Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս »։ Այլ և նմանօղ իւր և Տեառն սովիպէ լինել։

Դարձեալ փութայ ամենեքումբք հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն վարել, « Հայեցարուք, ամէ, ի դրագուխն հաւատոց, և ի կաստարիչն Քրիստոս »։ Եւ գարձեալ, թէ « Յիշեցէք զառաջնորդս ձեր, որք խօսեցան զբանն Աստուծոյ. Հայեցեալ յելս զընացից նոցա, նմանօղք եղերուք հաւատոցն »։ Եւ միանդամայն, եթէ « Զայս խորհեսցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ որ և ի Քրիստոս Յիսուս »։ Հանդոյն սմին և Պուկաս յսկիլլըն առաքելագործ մտաւեին դնէ։ իսկ ցանկալի Տեառն եղբայրն Յակո-

1 Միւս օրին. Պարբեցելոց։

2 Միւս օրին. հոդեսութեամց։

3 Միւս օր. չունի. չ։

րոս, զհամօրէն իսկ զդունդն սրբոց հանդերձ սըրբաւէր տերամբն յօրինակ առեալ՝ ի թղթին իւրում ասէ, եթէ, « Օրինակ առէք չարչարանաց և յերկայնմտութեան զմարգարէն, որ խօսեցան յանուն Տեառն զեառն տեսէք »։

Յայտնի է այսուհետեւ ասացելովքս, եթէ գովութիւն ամենայն աստուածասէր ընտրելոցն ի Տեառնէ է. որ ի հրեշտակաց, որ առ ի միմեանց, ոչ ի պարծանս անձանց՝ այլ առ ի նախանձուկս միմեանց արկանելոյ զմիմեամբք, քաջալերեալք հասանիցեմք ի բարեացն կատարումն՝ ի նշանակեալ նպատակն երանելոյն Պաւոսի, եթէ « Միաբան հասանել ի չափ հասակին Քրիստոսի »։ Որոյ ապատութիւնն յերկինս է, ակն ունել Փրկչին մեծին Աստուծոյ։ Ունիմք և զկանոնական յաջորդեալ յառաքելոցն անափ զնորհապատում գրեալսն, եթէ որպէս մեծարեալք ի միմեանց, գովեալք ըստ Ճշմարիտ հաւատոյն և ըստ աւետարանագործ կրօնից, մինչեւ ցայսօր ժամանակի նովին սովորութեամբ վարին։

Եւ արդ առեալ յերկոցունց համարձակութիւն ի կիր արկանել և զվարս առն արդարոյ, արդ այսուհետեւ և խօստացեան առաջի գիցի. և հայրենակատար մեծարեալ պայմանաւ՝ որ առ ի մէնջ հաճացի, և նոցա քաղցրատոր հրաման հասուցեալ զարդարեսցի։

Առն զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, եր Մաշեց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդանն կոչեցելոյ։ ի մանկաթեամբ ափան վարժեալ՝ Տելլենական գպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն

Եր այս այս Մեսրող, ի Տարաւն գաւառէ, ի Հացեկաց գեղջէ, որդի Վարդանաց. ի մանկաթեամբ ափան վարժեալ Հելլենաց գպրութեամբն, և եկեալ ի գուռն Արշակունեաց թա-

Հայրակ
+ 383

Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական գիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն՝ աշխարհիոց Հայոց՝ Առաւանաց ուրումն: Տեղեկացեալ և հմտու եղեալ աշխարհական¹ կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց գօրականացն, և անդէն ուշ եղեալ փութեպի ընթերցուածոց աստուածելին գրոց. որով առ ժաման լուսաւորեալ և թեւամուխ միջամուխ յաստուածատուր հրամանացն հանգամանն, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասուութիւնն:

Եւ յետ այսորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին գարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնսըն, և առեալ զիսան պարձանաց, ելանէր զինի ամենակեցոյց խաչելոյն: Եւ հաճեալ հրամանացն՝ ի խաչակիր գունդն Քրիստոսի խաննէր, և անդէն վաղվազակի ի միայնակեցական կարգ մտանէր. բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձն տուեալ միաւորութեամբ, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարածաշկութեանց, արգելանաց անլուսից, խարազ-

գաւորացն Հայոց, կացեալ յարքունական գիւանին, լիներ սպասուոր արքայատուր հրամանին: Եւ հմտու եղեալ աշխարհակեաց վարուց՝ ի զինուորական կարգս և յաւաջագէմ, և սիրելի էր ամենեցուն մեծամեծաց և փոքրունց, խասառութեանն առաջնորդեալ յիրաւունս ամենայն:

Յետ այսորիկ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրի գարձեալ, մերկանայր յինքէնէ զամենայն զբաղմունս, և առեալ ըզիսան պարձանաց, ըստ աւետարանական հրամանին ելանէր զինի ամենակեցոյց խաչելոյն Քրիստոսի: Եւ հաճեալ զիշխանաց պայտական կամաց աշխարհական ի խաչակիր գունդն Քրիստոսի աշխակերտացն խառնի. և զիրօնս միանձանց յանձն առեալ յաւետ կրօնաւորէրէ: Եւ բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր. և ամենայն կրթութեան հոգեւորացն զանձն տուեալ՝ կրօնաւորէրէ: Եւ բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ի քաղց և ի ծարաւ, ի յուրա և ի մերկութիւն. խոսա-

¹ Յերկոսին յօրինակսն ևս աշխարհական էր:

նազգեստ և գետնատարած անկողնոց: Եւ բազում անգամ զիշխական հանգիստ գիշերոյն և զարկ քնոյ՝ յոտնաւոր տքնութեան՝ ի թօթափել ական վճարէր բազում անգամ. և զայս առնէր ոչ սակաւ ժամանակս: Եւ գտեալ զոմանս գտաստամբս յինքն յարեցուցանէր, աշակերտել նմին աւետարանական կրօնաւորութեանն: Եւ ամենայն փոքրութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ մատուցանէր:

Եւ գտեալ պյուհետեւ երաննելոյն զիշխատացեալս իւր, գիմենալ իջանէր յանկարգ և յանգարման տեղիս Գողթան: Այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածամբէր, բատ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի: իսկ երանելոյն վազվազակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանգերձ միամիտ սատարութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոյց, և ի սատանայական գիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հընազանդութիւն Քրիստոսի մատուցանէր:

Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմաննեալ, յայտնի իսկ բնակչաց գաւառուն՝ նշանք մեծամեծք.

բուռ եղեալ, խարազնազգեստ և գետնատարած անկողնօք, և զշանգիստ քնոյ գիշերոյ յոտնաւոր տքնութեամբ ի թօթափել ական վճարէր բազում անգամ. և զայս առնէր ոչ սակաւ ժամանակս: Եւ գտեալ զոմանս գտաստամբս յինքն յարեցուցանէր, աշակերտել նմին աւետարանական կրօնաւորութեանն: Եւ ամենայն փոքրութեանց ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ, և նովիսի լուսաւորեալ և պայծառացեալ ի հանգէ ճգնաւորական հաճոյ Աստուծոյ և մնարկան երեւեալ:

Առեալ պյուհետեւ երաննելոյն զաշակերտեալս իւր՝ երեթայր ի Գողթան. որում ընդ առաջ լինէր իշխանն Շամբիթ, և սիրով ընդունէր որսէս զծառայ Աստուծոյ բարձրէլոյ. և բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտական հաւատոցն ի Քրիստոսս: իսկ երաննելոյն անդէն վազվազակի զլալդարպետական շնորհանին ի կամաց աշխարհական մատակարարութեամբ: Զի էր ինչ ի նոսա ի հեթանոսական սովորութեանցն, զորս գարձուցանէր ի գլուռութիւն Ճմանբառութեան, և զամենեսեան լուսաւորէր շնոր-

երեէին, կերպակերպ նմանութեամբ գիւացն փախըստական լինելով, անկանէին ի կողմանս Մարաց : Նոյնպէս առաւել հոգ ի մափ արկանէր՝ զհամշաշխարհականս սփոփելով. և առաւել յազօթս մըշտընչենամունչս, և բազկատարած պաղատանս առ Աստուած, և արտասուս անդադարս. զմտաւ ածելով զառաքելականն, և ասէր հոգալով. « Ճրտմութիւն է ինձ և անպակաս ցաւք որտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգականաց » :

Եւ այնպէս արտամական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, և թէ որպիսի' արդեօք ելս իրացն գտանիցէ : Եւ իրեւ աւուրս բազումն անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետեւ հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ : Եւ միանդամայն յօժարութեամբ գումարեալ համերեր ազօթիւք մեծովք առ Աստուած կանխէին, վասն ամենայն ոգւոց քրիստոսարեր փրկութեանն հասաներոյ. և զայն առնէին աւուրս բազումն : Ապա ելանէր նոյցա պարգեւական յամենաբարին Աստուածոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և գիրս նշանագրոց Հայաստան ազգին հասանել. բազում հարց փորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ, և բազում աշխատութեանց համբերեալ, ազգ առնէին ապա և զիան-

հաց բանիւն : Յորոյ ի ձեռն մեծամեծ սքանչելիք երեւեալ, գիւաց կերպ ի կերպ լինելով՝ զաղաղակ բարձեալ յամենեցուն լըսելս հնէցուցանէին զշալածանս իւրեանց, անկանելով ի կողմանս Մարաց : Վասն որոյ առաւել ունկնդիր լինէին աշտկերտեալքն հոգեկրօն վարդապետին, վասն հաւատոց և վարուց որ նոյցա աւանդեցաւ ի սուրբ հարց մերձաւորաց Փրիստոսի' գրովք որբովք :

Բայց զի ոչ էր գիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդեցն՝ առ աշակերտեալսն, իսկ երանելի վարդապետն ատարակուսեալ ի խորհուրդս իւր՝ առ Աստուած ապաւենէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգեր հայ լեզուիս, որով նոււղութիւնն յառաւելութիւն գայցէ գրովք : Եւ յարուցեալ այնուհետեւ հասանէր առ Սուրբն Սահակ

խագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր վասմիապուհ :

Յայնժամ՝ պատմէր նոցա արքայն, վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելց, որոյ յանկարծ ուրեմննշանագիրս աղփարետաց հայերէն լեզուի : Եւ իրեւ պատմեցաւ նոցա յարքայէ վասն գրելոյն ի Դանիէլէ, յօժարեցին զարքայ՝ փոյժ առնել վասն պիտոյիցն այնոցիկ : Եւ նա առաքէր զոմն վահրիծ անուն հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին . որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի :

Իսկ Հաբէլին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց . ի հինգերորդի ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր : Իսկ արքային հանդերձ միաբան սրբովն Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէն, ուրախ լինէին : Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիւտն, խնդրէին Հայցէին եւս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն մարթեցնեն : Եւ յորժամ՝ բազումք ի նոցանէ տեղեկանայրին, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել . որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր . և իրեւ ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր . և նովին նշանագրովք տանէր :

Հայրապետն Հայոց, յաղագս գրոյ նշանագրաց . եգիտ վնա առաւել եւս փափաքոլ այնմ: Եւ յետ բազում ջանից և աշխատութեանց և ոչ ինչ օգտելոյ, դարձեալ յազօթս ապաւինելով՝ յԱստուածոյ ինդրէին որում ցանկային: Եւ մեկնեալ ի միմեանց, և յանձն առեալ զիստամբերութիւն՝ ճգնէին առաւել քան զաւաւելու:

Եւ յետ այսորիկ ծանուցեալ լինէր ի թագաւորէն վասմագոյ, որ և նա այսմ նախանձայոյց եղեալ, առաքէն զՄերովք աշակերտաքն հանդերձ ի Միջագետա Ասորւոյ: Եւ երթեալ նորա խուզէր ուր ուրեք իմաստափրաց համբաւէր գիտութիւն: Եւ հանդիպեալ Դանիէլի ումեմն եպիսկոպոսի Սոորւոյ առաքինւոյ, որ ասաց նմա ցուցանել զնշանագիրս՝ որում

իսկ իրբեւ ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւզոբայս և զկապս հայերէն լեզոյն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան:

Յետ այնորիկ գարձեալ կրկին անգամ՝ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելցն Մաշթոցի գաս մի մանկայ Հրամանաւարքայի, և միարանութեամբ որբոյն Սահակայ, և Հրաժարեալք ի միմեանց համբուրիւ որբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի վոամչապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց. որոց առաջինն Եղեսիա կոչի, և երկրորդն Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն. որոց առաջնոյն Բարիլաս անուն և երկրորդին Ակակիոս. հանգերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ, և բաղում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի:

Իսկ աշակերտամէրն փարգապետին՝ զտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դրաբութիւնն կարգէր, և զոմանս յունական դպրութիւնն՝ անտի ի Սամուստական քաղաքն դումարէր, և նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ զաղօթս և զտքնութիւնս և զպազտանս արտասուալից, զխստամբերութիւնն, զհոգս զաշխաղհահեծո, յիշերով զասացեալն մարդարէն, եթէ՝ « Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես » :

յանկայրն: Եւ յետ բաղում աշխատութեանց և քննութեանց և ուսմանց՝ անշահ մնացեալ, զի ոչ բերէր զբառս և զբան ալիտացն հայերէն լեզուիս:

Յայնժամ հաւասառուալս Աստուած ապաւինի, և աղօթս արտասուալցոս առ Աստուած մատուցանէր, և հայցէր յամենեցունց Տեառնէն զոիւ և զդիշէր՝ ցուցանել զփափաքելին նշանագրաց: Եւ տեսանէր ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիւ, պյլ ի սրտին գործարանի երեւութեալք հոգւոյն աչաց:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելց: Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորսով և սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղորայիւր և կապօք: Եւ ապա Հրաժարեալ յեպիսկոպոսացն սրբոց, համդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր: Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան՝ չորոխանս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնրբագոյնսն զիարձն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանգերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոյ առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եղեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով եթէ՝ « Ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զբանս հանճարոյ »: Որ և գրեցաւ ձեռամբն այնու

թաթ ձեռին աջոյ, գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեռն վերջք գծին ուներ քարն. և ոչ միայն երեւութեացաւ, այլ և հանգամանք ամենայնիցն՝ որպէս յամանի ի միաս նորա հաւաքեցաւ, Եւ յարուցեալ յաղօթիցն եստեղ վշշանագիրս մեր՝ հանգերձ Ռուկինոսիւ աշակերտիւ Եպիփանու, որ ի Սամոն էր միայնակեայ. Կերպարձեւեալ զգիրն ըստ հրամանի Տեւրովքայ վարդապետին և երանելւոյ, փոխադրելով ըստ հայերէն ըստ անսոյթաբութեան սիլորայից Հելլենացւոց:

Եւ իսկոյն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստոյն Սողոմնի, բովանդակեալը գերազանց և երկուս յայտնիսն, զին կտակարանն յեղուլ ի հայ բան: Եւ աշակերտք նորա Յովհան և Յուլսէփ ի նոյնս նպաստ լինէին: Եւ զարուեստ գրչութեանն ուսուցանէր մանկագոյն աշակերտացն:

† Սիւս օրին. բարութեան:

րիկ գրչի. հանդերձ ուսուցանելով մանկունս գրիշանին դպրութեան:

Ապա յետ այնորիկ առնոյր թուղթս յեպիսկոս պոսէ քաղաքին. և հրաժարեալ ինոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց: Որ յորոց նախընկան եղեւ, առաջի արկեալ նոցա զնանագիրն աստուածատուր. վասն որոյ բազում իսկ գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս Աստուծոյ, և ի մխիթարութիւն աշակերտելոցն ոչ սակաւք: Յորոց թուղթս աւետագիրս հանդերձ չնորհատուր պարզեւոքն, և ամենայն իւրայիւքն, ի չնորհացն Աստուծոյ ճանապարհորդ լինէր. զօթեւանօք անցեալ աջողութեամբ և հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն, ի կողմանն Այրարատեան գաւառին, առ սահմանօք նոր քաղաքին, ի վեցերորդ ամի վասմչապհոյ արքային Հայոց մեծաց:

Եւ ոչ այնպէս մեծն Մովիսս զուարձանայր յէջս Այնէական լերինն. չասեմք թէ առաւելօքն՝ պակասագոյն: Քանզի յԱստուծոյ առեալ և աստուածագիր հրաման ի բաղուկս այրն աստուածատես, ի լեռնէն իջանէր. այլ վասն վրէժագործ ժողովրդեանն, որոց թիկոնք ի տէրունիսն, և կործան յերկիր, տիրագրուժք յեւրեանց կուռս ձուլածուին երկիրպագանէին, և զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ լացուցին¹. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէր բերելոյն թախտութիւնն: իսկ այսր երանելոյ՝ վասն որոյ ճառեալքս յարդարին, ոչ ըստ այնմ օրինակի որ

Ըստ այն ժամանակս թագաւորեաց թէոդոս փոքր: Եւ եկեալ երանելոյն Մեսրոլբայ Հայոց վարդապետի, և բերեալ զնանագիրս մերոյ լեզուիս առ սուրբն Սահակ Հայոց, և առ թագաւորն Հայոց Վասմչապուհ, յօյժ ուրախ լինէին որպէս ընդտախտակս աստուածագիծս. և գոհութիւն և վասն ամենէ

անդն գործեցան, այլ ինքն իւրով լցեալ հոգեւոր մխիթարութեամբ՝ կարծեալ զընդունելոցն յօժարութիւնն, և ընդունելոցն յուսով ուրախութեան՝ դասաւորութիւն ճանապարհացն աւետարեր:

Բայց մի՛ ոք յանդենագոյն վասն ասացելոցն ըզմեզ համարեսցի. թէ զիսրդ զայր մի խնարհագոյն ընդ մեծին Մովիսսի, ընդ աստուածախօսին, պահնչելագործին նմանեցուցեալ հաւասարեաց. ուրով թերեւս սովորանիցենք: Եւ կարեմք այլ աւելի հաւատովք. քանզի և չկայ ինչ ի վերայ յայտնեօք և ծածկանօք² զաստուածականն խոտել: Քանզի միոյն Աստուծոյ ամենազօրի չնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին:

Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն, ազգ լինէր թագաւորին և սրբոյ եպիսկոպոսին: Որոց առեալ զամենայն նախարարագունդ ամբոխ, ի քաղաքէն երեալ՝ պատահէին երանելոցն՝ զափամբ Ռահ գետոյն: Եւ ըզցանիալի ողջոյնն միմեանց տուեալ. ուստի և բարբառովք ցնծութեան և երգօք հոգեւորօք, և բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն գառնային, և զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին:

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժագուժ կողմաննան Մարաց, որը ոչ միայն վասն դիւսկան սատանայակիր բարուցն ճիւտութեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք³ էին: Առ ի յարգարել և զնոցա հարուստ ամացն ծնունդս՝ առեալ պարզախօս հոեւտորաբանս, կըրթեալ աստուածատուր իմաստութեանն ծնունդս կացուցանէին: Եւ այնպէս միջամուխ եղեալ հան-

ցունց արարչին մատուցանէին զնորոգաստուր պարգեւացն որ տուաւ նոցա ի վերուստ: Եւ Ժողովեալ մանկունս ուշեցու և քաջուամնւնս, փափկաձայնս և յերկարութիս, և գարոցս կարգեալ յամենայն գաւառս և ի գեւզո հրամանաւ սուրբ հայրապետին և թագաւորին, ուսոյց զբնաւ ամենայն աշխարհս Հայոց:

¹ Միւս օրին. Հայէականօտ:

² Միւս օրին. Գոհուաբնաւուցոց:

³ Միւս օրին. Կարասաւուցոց:

գամանօք օրինապատգամացն , մինչեւ բնաւ արտաքոյ իւրեանց բնականութեանն զերծանել¹ : Եւ ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ գաւետարաբանական արուեստն՝ ի թարգմանել ի գրել և յուսուցանել . մանաւանդ հայեցեալ ի տեսոնաբարբառ հրամանացն բարձրութիւնն , որ առ երանելին Մովսէս եկեալ , վասն ամենայն իրացն եղելոց , յաստուածեղէն պատգամացն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրել առ ի պահեստ յաւիտեանցն որ գալոցն էին . նոյնպիսիք և այլոց մարգարէիցն հրամայեալք : « Առ , ասէ , քարտէզ նոր մեծ , և գրեալ ի նմա գրչաւ գպրի » : Եւ այլուր , թէ՝ « Գրեաւ զտեսիլդ ի տախտակի , և ի գիրս հաստատեաւ » : իսկ Դաւիթ յայտնապէս ևս վասն ամենայն ազգաց՝ զվիճակ աստուածատուր օրինացն նշանակէ ասելովն , թէ՝ « Գրեսցի յազդ յայլ » : Եւ թէ՝ « Ճէր պատմեսցէ գրովք ժողովրդոց » : Ճոր եկեալ կատարեաց ամենափրկիչն Քրիստոս նորհատուր հրամանաւն , եթէ՝ « Ելէք ընդ ամենայն ազգը » . Եւ եթէ՝ « Քարոզեսցի աւետարանս ընդ ամենայն տիեզերս » : Ուստի և երանելի հարցն մերոց համարձակութիւն առեալ յուսալից փութով , և երեւելի և արդիւնակատար ըստ աւետարանին՝ զիւրեանց մշակութիւնն յուցանեն :

Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց , անպայման պրանչելի լինէր . յորում անկարծուրեմն օրէնտուոց Մովսէս՝ մարգարէական դասուն , և յառաջադէմն Պաւլոս՝ բովանդակ առաքելական գնդովն , հանդերձ աշխարհակեցոյց աւետարանս Քրիստոսի , միանդամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօք գտան :

Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնախայել տեսիլ հայելոյն : Քանդի երկիր , որ համբաւոցն անդամ օտար էր կողմանցն այնոցիկ ,

յորում ամենայն աստուածագործ պքանչելագործութիւնն գործեցան , առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր . ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն , այլ և յառաջագոյն յաւիտենիցն , և ապա եկելոցն սկզբանն և կատարածի , և ամենայն աստուածատուր աւանդութեանցն : իսկ իրեկ զշափ առեալ զիրացն հաստատութեան , և համարձակագոյն և առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիւտ վարդապետութեանն՝ խմբէին ուսուցանել և թերել , և պատրաստական քարոզութեանն անդէտ մարգական յօրինել . որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և գրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ : Քանդի յԱյրաբատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն , բղխեցին Հայոց չնորհք պատուիրանացն Աստուծոյ :

Անդ էր յիշելի և մարգարէականն , եթէ՝ « Եզիցի անդ աղբիւր բղիսեալ ի տան Դաւիթի » : Որ և սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ՝ միջամուխ ձեռամբ ըզդործ աւետարանչացն Քրիստոսի գործել . գումարել ի կողմանս , ի գաւառս , ի տեղիս տեղիս՝ Հայաստան ազգին , դաս դաս՝ զաշակերտեալմն ճրշմարտութեանն , զհասուցելոցս ի կատարումն գիտութեան , բաւականս և առ ի զայլսն զեկուցանելոց . որոց կանոն և օրինակ զիւրեանց անձանց արգասիս եղեալ , և պատուիրեալ կալ ի նմին կանոնի . և իւրեանց անդէն զ'աւրնթերակաց աբրանիսն , հանդերձ ամենայն ազատադունդ բանակիւն՝ աստուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ : Առաւել երանելոցն Սահակայ զՄամիկոնեան օրեարն՝ ի վարժու վարդապետութեանն պարապեցուցեալ . որոց առաջնոյն Վարդան անուն էր , որ և Վարդկան կոչէր : Նոյնպէս և զամենայն ոգի ջանայր յերիւրել հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեան :

1. Յօրինակին և ի միւսն . Էրեւանց բնակչուն + Երևանց պատմութեւ :

Յետ այնորիկ առնոյր հաւանութիւն երանելին Մաշխոց . որպէս զի Ցէր եպիսկոպոսն ի կայենաւ կանսն , և նա ի սփիւռս հեթանոսաց զբանն կենաց սերմանիցեն : Եւ հրաժարեալ ի նոցանէն հանդերձ այլովք ևս օգնականօքն . որոց առաջնումն Ցիրայր անուն ի Խորձենական դաւառէն , և երկրորդին Մուշէ⁴ անուն ի նահանգէ Ցարոնոյ , որք էին սուրբք և զուարթագոյնք . հանդերձ այլովք ևս սպասաւորօք աւետարանին , զոր չեմք բաւական ըստ անուանցն նշանակել . որովյանձն եղեալ երանելին չնորհացն Աստուծոյ , երթեալ իջանէր առուստան Գողթան՝ յառաջին դաստակերտն իւր : Եւ անդ ընդելական տովորութեամբն ի կիր արկեալ զվարդապետութիւնն՝ հաւասարութեամբն բարեպաշտին Շաբաթայ , լի առնէր զգաւառն ողջունիւ աւետարանին Քրիստոսի . և կարդէր յամենայն գիւղս գաւառին՝ դասս սրբոց վանականաց : Որում և հասեալ ժամանեալ հայրաբարուին Գոտայ , որդւոյ Շաբաթայ առն Քրիստոսամիրի , բազում սպասաւորութիւն իբրև հաւասարի որդւոյ վարդապետին տանէր :

Սպայետ այնորիկ ի սահմանակիցս ի Սինական աշխարհն ելանէր . և անդ աստուածասէր հնազանդութեամբ ընկալեալ զնա իշխանին Սիւնեաց , որ էր Վաղենակ անուն , բազում օգնականութիւն գտեալ ի նմանէն վասն իրացն առաջի արկելոցն , մինչեւ հասանել նմա բովանդակ ի վերայ սահմանաց Սիւնեաց : Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեանն , առուել զգաղանամիտ զվայրենադոյն զծիւաղաբարոյ Կողմանցն . և այնչափ փոյթի վերայ ուներով և դայելաբար մուցանել և խրատել , մինչեւ ի նոցունց խոկ ի վայրենեացն՝ եպիսկոպոսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց կարդել , որոյ անունն կոչէր Անանիաս . այբ սուրբ և երեւելի հայրաբարոյ ժառանգաւորաց եկեղեցւոյ . ապա և զերկերն Սիւնեաց՝ դասուք վանականաց նոյր :

4 Յօրին . Մա-Հու էր . ուղղեցաք ըստ միւս օր .

Յորում ժամանակի պարզեւեալ Աստուծոյ , հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց՝ քաջն Սիսականն վասակ . այր Խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց , չնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ : Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն , իբրեւ որդւոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ , և ծառայեալ ըստ աւետարանին վայելութեան , մինչ ի վախճան զիրամայեալն ի գործ բերէր :

Դարձեալ յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ , հոգ ի մոտի արկանէր սիրելին Քրիստոսի՝ և վասն բարեարոսական կողմանն . և առնոյր կարգեալ նշանագիրս Վրացերէն լեզուին , ըստ նորհեցելոյ նմա ի Տեառնէ : Գրէր կարգէր և օրինօք յարդարէր . և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց , յարուցեալ գնայր իջանել ի կողմանն Վրաց . և երթեալ յանդիման լինէր թագաւորին՝ որում անուն էր Բակուր , և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս : Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն , հանդերձ ամենայն դաւառօքն :

Եւ նորա զիւր արուեստն առաջի արկեալ՝ Խրատէր յորդորելով . յորում և յանձն առեալ ամենեցուն զինդրելին կատարել : Եւ գտեալ զայր մի թարգման Վրացերէն լեզուին , որ անուանեալ կոչէր

Երթեալ և յաշխարհն Վրաց երանելի այրն Աստուծոյ առնէ և նոյց նշանագիրս ըստ տուեցելոյ ի նմա ի վերուստ նորհացն Աստուծոյ . և վարդապետ թողեալ անդ ի քաղաքաց քաղաքաց ուսուցանել զմանկունս նոցոյ : Եւ ինքն յԱղուանս երթեալ և անդնորոգէր ըստ նմին օրինակի զնանագիրս և զուսումնասիրութեանն աւանդս , և վարդապետ թողեալ անդ դամայր ի Հայու : Եւ գտանէ զսուրբն Սահակ հայրապետ ի թարգմանութեան պարապետ չնորհօքն Քրիստոսի յԱստուծոյն , ու ինեւով Յունի , զի ի Մերուժանայ այրեալ էլին յոյն գրեանն հանուր աշխարհս , զի ի բարժամել զաշխարհս Հայոց շտաբին Պարսկաց վերակացուքն Յոյն ումեք ուսանել զգարութիւն իւրեան մասին , այլ միայն Ասորի : Վասն որոյ յոյժ տարակուսեալ լինէին սուրբ հայրապետին Սահակ և երանելին Մեսրոպ . և գնացին զկողմանք արեւմուց վիճակին իւրեանց ի մասն Յունաց :

Քաղայ, այր գրագէտ և ճշմարտահաւասա. հրաման տայր այնուհետեւ արքայն վրաց՝ ի կողմանց կողմանց, և ի խառնաղանջ գաւառաց իշխանութեան իւրոյ՝ ժողովել մանկուն՝ տալ ի ձեռն վարդապետին: Զոր առեալ՝ արկանէր ի բովս վարդապետութեանն. և հոգեւոր սիրոյն եռանդմամբ՝ զաղտ և զժանդ շարաւահոտ գիւացն և զմնոտիագործ պաշտամանն ի բաց այնչափ անջատեալ ի հայրենիաց իւրեանց՝ և անյիշատակ ցուցանել, մինչեւ սել՝ թէ՝ « Մոռացայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմց »:

Եւ արդ զնոտ, որ յայնչափ ի մասնաւոր և ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ՝ փառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր. յորոց և իմ անարժանիս՝ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ և բարեպաշտօն՝ եպիսկոպոս կացեալ տանն արքունականի: իսկ իրեւել ընդ ամենայն տեղիս վրաց կարգեալ զգործ աստուածպաշտութեանն, այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ գառնայր յերկիրն չայոց. և պատահեալ Սահակյ կաթուղիկոսի չայոց, պատմէր նմա զողջութենէ եղելոցն, միանդամայն փառաւոր առնելով զԱստուած զմեծանունն վրիտոս:

Ապա դարձեալ երանէր շրջէր զտեղեօք կարգելեօք, և զգաւառօքն աշակերտելովք աշխարհին չայոց, զուարթացուցանել, նորոգել. հաստատել: Եւ յորժամ այնպէս ընդ ամենայն տեղիս՝ լի առնէր զտուրբ աւետարան ծեառն, և ամենեցուն զգուշացեալ¹ զիենաց ճանապարհն վարելոյ, խորհուրդ առնոյր² այնուհետեւ վասն կէս ազգին չայոց, որէր ընդ իշխանութեամբ թագաւորին Հոռոմոց: Եւ փութացեալ գնայր հանդերձ աշակերձ բաղմօք, անցանել ի կողմանս Յունաց. և վասն առաւելագոյն

1 Միւս օրին. պատշաճեալ:

2 Միւս օրին. սունէր:

բարեգործ համբաւուց՝ յառաջագոյն զնմանէ անդ ի հիւսիսական կողմանց հոչակելոց, առաւել միամութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխարհին, և յիշիանաց և ի գաւառականացն պատուեալ. մանաւանդ ի սպայապետէն աշխարհին, որ անուանեալ կոչէր Մնասողիս¹ ի մուտ ճանապարհին. որ զիրս առաջի եղեալ գրով՝ ցուցանէր կայսերն, որում թէովոս կոչէին, որդի Արկադու կայսեր. ուստի և հրաման ելանէր, վայերուչ մեծարանօք զՍուրբն՝ Ակումիտ անուն կոչելոյ:

Իսկ նորա զբաղմութիւն աշակերտացն տարեալ ի քաղաքն Մելիսթինացւոցն, յանձն առնէր սըրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին. և զիսաւոր աշակերտացն՝ ժողոյր զայն, որում Ղեւոնդէոսն կոչէին. այր հաւատարիմ և ճշմարտապատճում: Եւ առեալ երանելոյն զպատուական եպիսկոպոսն դերջանոյ որոյ անուն կոչէր Գինթ, և սակաւս յաշակերտաց անտի, և ելեալ յանարւոյն դիմուական և բազում պատիւ գտեալ, հաւանէին ի թագաւորակաց քաղաքն կոստանդինական, զորմէ իսկոյն պատմէին յարքունիսն. և մուեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածակարգ թագաւորացն և հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ գրանն, որում Աստիկոս կոչէին. յորոց և գտեալ չնորհս՝ հրամայեալ լինէր

Եւ առաքէ սուրբն Սահակ զՍեսրովք առ կայսր թէոգոս և առ հայրապետն Ատտիկոս հանդերձ թղթովք, և թուռամբն իւրով Վարդանաւ, զգացուցանելնոցաց զգալուստն իւրեանց, և զի ընդունեցին բնակիչք աշխարհս զնոր ուստումն վարդապետութեանս Հայոց: Որոց հանդիպեալ զօրաբարին Անապոլէայ, ոչ փոքր ինչ արար ընդունելութիւննոցաց. զի յառաջագոյն ըռեալ էր զըռւր առաքինութեան երանելեան Սահակյ և Մեսրովքայ. և ի ձեռն թղթոց յառաջագոյն զգացուցանէր կայսեր. և առնուհաման արժանապէս առաքել և բարեփառաւութեամբ յուղարկել ի Բիւզանդիոն: Եւ յանդիման եղեալ թագաւորին և հայրապետին, և ձեռնագրեցին զՄեսրովք Եկեղեսիկոս. և գրեցին զնա ընդ առաջին երանելի վարդապետուն:

1 Յօրինակին. Անդիմի. և միւս Անդիմի. բայց խորինացին Անատու ասէ:

ժամանակս ինչ անդէն ի տիեզերական քաղաքին մեծարել գարմանօք կարգելովք, յեկեղեցոյն և յարբունեաց և ի պատուական իշխանաց քաղաքին:

Եւ ապա յետ Պատերին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյիցն զհանգամանս, և առեալ զանընդգիմակաց հրամանն հանդերձ սակերօք կայսերագիր նշանակելովք՝ վասն մանկուոյն յաշակերտութիւնն, առ ի կէս ազգէն Հայոց ժողովելոյ, և վասն ժամանագործ ազգին բարբարոսաց, և եկեղեցեաց հաստատութեան, և մեծամեծ պարգեւօք պատուել: Վասն որոյ հաւանեցուցեալ ծշմարտին զարգունիսն, անընկալ ժողովյր. և երկերպագեալ ծիրամանափառ օգոստականացն, և որբոյ կաթողիկոսին, և ընկալեալ ողջոյն յեկեղեցոյն և յերեւելի իշխանացն քաղաքին, և ամենայն իւրայովքն յաջողեալք՝ ելանէին ի գեսպակս ի կառս արքունատուրս: Եւ մեծաւ շքով և բազում վայելչութեամբ՝ ունէին զժանապարհս արքունականս, և ամենայն քաղաքացն պատուհեռվ, ի քաղաքին պայծառագոյն երեւելին. և մեծամեծ պարգեւս գտեալ, գային հասանէին ի ժամանդիր կողմանս. և անդէն վաղվազակի պատահեալ սպարապետին Հայոց, հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին: Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք, փութայր վաղվազակի զհրամանն կատարել. և հրեշտակս արձակեալ այնուհետեւ ի գաւառս կէս ազգին Հայոց՝ յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկուոյ ժողովը կատարել հանդերձ թղթովք, և եկեալ հանդիպէին սրբոյն Սահակայ, և զօրավարին Անատոլեայ: Որոց ընկալեալ զթուղթս և զըրամանս՝ յոյժ ուրախ եղն և փառաւորութիւն ամենեցուն Տեառն և Աստուծոյ հատուցին: Եւ փութայր վաղվազակի ըզհրամանն կատարել. և առաքէ ի գաւառս և ի քաղաքս Հայոց որ ընդ իշխանութեամբն կայսեր, ժողովեալ բազմութիւն մանկըսւ ի տեղիս տեղիս, և գարմանս և ոռչիկս կարգէր յարբունուսու. որպէս զի անզբազապէս ուսցին. յորս և երանելին Մեռովիլ լուսաւոր վարդապետութեանն ի գործ արկեալ զժողովեալ մանկունսն ուսուցանէր վնշանագիրն. և վարդապետս կացուցանէր աշակերտացն, զի առ փոքր փոքր զնոսա ի կատարումն ուսմանն ածիցեն:

Եւ գարձան հանդերձ թղթովք, և եկեալ հանդիպէին սրբոյն Սահակայ, և զօրավարին Անատոլեայ: Որոց ընկալեալ զթուղթս և զըրամանս՝ յոյժ ուրախ եղն և փառաւորութիւն ամենեցուն Տեառն և Աստուծոյ հատուցին: Եւ փութայր վաղվազակի ըզհրամանն կատարել. և առաքէ ի գաւառս և ի քաղաքս Հայոց որ ընդ իշխանութեամբն կայսեր, ժողովեալ բազմութիւն մանկըսւ ի տեղիս տեղիս, և գարմանս և ոռչիկս կարգէր յարբունուսու. որպէս զի անզբազապէս ուսցին. յորս և երանելին Մեռովիլ լուսաւոր վարդապետութեանն ի գործ արկեալ զժողովեալ մանկունսն ուսուցանէր վնշանագիրն. և վարդապետս կացուցանէր աշակերտացն, զի առ փոքր փոքր զնոսա ի կատարումն ուսմանն ածիցեն:

զովել, և նոցին ոռճիկս կարգել ի պատեհագոյն տեղիս. յոր և երանելին զվարդապետութիւնն իւր ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր:

Ապա յետ այնորիկ ձեռն արկանէր զգժպատեհ և զկամակոր Բարբարիսնոս աղանդն քննելոյ. և իբրեւ ոչինչ դատանէր հնարս յուղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիք ի բանդս, ի տանշանս, ի գելարանս: իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէն դատանէին, խորտակեալս ապա խանձեալս, մրեալս և գունակ գունակ խայտառակեալս, և յաշխարհէն կորդէին:

Իսկ երանելոյն զիւր վարդապետութեանն պայմանն արարեալ՝ սակեալ² և վճարեալ, և բազում շընորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ ստացեալ, ծովացուցանէր. զվարդապետութեանն զխորութիւն, և լցեալ զեղոյր ամենայն բարութեամբք:

Յայնմ ժամանակի եկեալ³ գիպէր նմա այր մի երեց Ազուան ազգով, Բենիամէն անուն. և նորահարցեալ և քննեալ զբարբարոս զբանս Ազուաներէն լեզուին, առնէր ապա նշանագիրս, ըստ վերնապարգեւ կորովի սովորութեան իւրում. և յաջողութեամբ Քրիստոսի նորհացն կարգեալ և հաստատեալ կշռէր: Յետ այնորիկ հրաժարեալ յեպիսկո-

Յետ այնորիկ ձեռն արկանէր զժպիրչ և զկամակոր աղանդն բորբորիանոսացն քննել. և որք ոչն գային յուղութիւն հաւանական բանին՝ սաստիկոյն խոշտանդանօք պատուհասին՝ ի բանդ և ի կապանս, և յայլ ինչ տանջանարանս. իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութենէ դատանէին Աստուծոյ առելիքն, ապա խանձեալս և մրեալս և պէսպէս խայտառականօք հալածէին յաշխարհէ:

Իսկ երանելին զիւր վարդապետութեանն պայմանն արարեալ, սկսեալ և վճարեալ, և բազում շնորհագիր մատեանս զհարցեցւոյ ստացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեանն խորութիւն. և լքեալ զեղոյր զամենեքումք ի բնակիչս աշ-

1 Միւս օրին. Հայրաբոյն:

2 Յօրինակին. Ամելելէր. թերեւս Կուտաւ:

3 Միւս օրին. Կուտաւ:

պրոսաց, յիշխանաց աշխարհին և յամենայն եկեղեցեաց. առ որս թողեալ վերակացուս հաւատացեալոցն՝ զերկուս ոմանս յիւրոց աշակերտացն. որ առաջնոյն Ենովք անոնք էր, և երկրորդին Դանան՝ արք կրօնաւորը և յառաջադէմք յաւետարանական սովասաւորութեանն. զորս յանձն արարեալ չնորհացն Աստուծոյ՝ անդէն զետեղէր: Եւ ինքն բազում աշակերտօք գայր անցանէր ի կողմանս Հայոց մեծաց. և հասեալ ի նոր քաղաքն յանդիման լինէր սրբոյ եպիսկոպոսին Սահակայ, և թագաւորին Հայոց, որում անոնք Արտաշէս կոչէին և ամենայն բանակին. և պատմեալ նոցա զգործու կողմանցն այնոցիկ ըստ աջողութեանց չնորհացն Աստուծոյ, դադարէր անդ աւուրսինչ՝ միմիթարէր վասն հոգեւոր անձուկն սփուելոյ:

Եւ ապա յետ այնորիկ հրաժարեալ գնալ ի կողմանս Ազուանից, և երթեալ իջանէր յաշխարհն. և հասեալ ի թագաւորական տեղիսն, տեսանէր ըգուռը եպիսկոպոսն Ազուանից, որում անուն Երեմիա կոչէին, և զնոցին թագաւոր, որում Արսվագէր անուն, ամենայն աղատօք հանդերձ. որոյ առաւել հպատակութեամբ ընկալեալ վասն անուանն Քրիստոսի: Ապա հարցեալ ի նոցանէ, առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր, և նոցա երկոցունց զուգացերոց եպիսկոպոսին և թագաւորին՝ յանձն առեալ գպրութեանն հնազանդելոյ. տային ևս հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց իշխանութեանն իւրեանց, բազմութիւն մանկանց՝ յարուեստ դըպ-

խարհն հոգեւոր վայելզութեամբ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: Եւ յանձն արարեալ զամենեսեան ամենապահ չնորհացն Աստուծոյ՝ ննէն գառնայր ի կողմանս Հայոց, և ըրջէր զամենեքումք, հաստատէր զաշակերտեալսն ի ձշմարտութեանն հաւատան: Եւ եկեալ հանդիպէր սրբոյն Սահակայ, և պատմեալ զեղեալն առ ի նմանէ, և միաբան օրհնեցին զԱստուած ի վերայ նորոգատուր պարգեւացն տուելոց նոցա ի վերուստ:

4 Միւս օրին՝ Աբովյան:

րութեանն ածել և գումարել՝ ըստ արժանաւոր և պատեհ տեղեաց, գասս դասս դպրոցաց, և ոռջիկս կարգել ի գարմանս:

Իսկ իրբեւ հրամանն այն, արգեամբք և գործովք յանկ ելանէր, ապա այուհետեւ երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յալկան թօթափել, վայրենամիտ և գաստարկաստն և անասնաբարց աշխարհն Ազուանից, մարգարէագէտք և տոպքելածանօթք և տեստարանաժառանգք լինէին, և ամենայն աւանդերցն Աստուծոյ, ոչ իւիթ անտեղեակք: Դարձեալ առաւել ևս երկիւզածն յԱստուծոյ արքայն Ազուանից, միամիտ փութով հրաման տայր, սատանայակիր և գիւամոլ ազգին, սաստիւ թափել զերծանել յունավար հնացելոցն, և հնազանդ լինել ամենահեշտ լծոյն Քրիստոսի:

Եւ յորժամ զայն արարեալ հաւասարութեամբ, և լցեալ զպիտոյն իւրեանց, և զիամացն յօժարութիւն, ձեռնատու ևս եղեալ նմա սրբամատոյց վարդապետութեանն ի Բաղասական կողմանն սրբայ եպիսկոպոսին՝ որում Մուշեղ կոչէին, հրաժարէր ապա և ի թագաւորէն և յեպիսկոպոսացն և յամենայն եկեղեցւոյն Ազուանից: Եւ զոմանս յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանէր, հանդերձ արամբ քահանայիւ արքունական դրանն, որում անունն Յովհաթան կոչէին, որոյ բազում յօժարութիւն ի վարդապետութենէն էր գտեալ, և յանձն առնելով զնոսա և զանձն՝ ամենապահ չնորհացն Աստուծոյ, խաղացեալ գայր ի կողմանցն Ազուանից, անցանել յաշխարհն Վրաց. և հանդէպ հասեալ գայր Գարդմանական ձորոյն: Բնդ առաջ լինէր նմա իշխանն Գարգմանից, որում Խուրս կոչէին, և ասանջական եղեալ նմա աստուածաէր երկիւզածութեամբ, առաջի զնէր զանձն վարդապե-

1 Միւս օրին՝ Հերնուս:

տին, հանդերձ իշխանութեամբն իւրով. առաւելացոյն իսկ վայելեալ ի հիւթ և ի պարարտութիւն վարդապետութեանն, յուղարկէ զերանելին ուր և երթալոցն էր:

իսկ նորա անցեալ գիմեալ ի կողմանսն, առ ուրով ժամանակաւ Արձիւղ անուն թագաւորեալ վրաց, որոյ առաւելապէս պայծառացուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն. և նորա չընեալ զամենայն աշակերտօք, պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն: Յայնժամ՝ իշխանին Տաշրացւոց առն պատուականի և աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն գաւառովն իւրով. և նորա ամենափիւռ վարդապետութիւնն, ոչինչ պակասութեամբ քան զայլոցն գաւառաց անցուցեալ, և յանձն արարեալ զնոսասրբոյ եպիսկոպոսին Սամուէլի, այնմ՝ զոր ի վերոյ նշանակեցաք, ինքն դառնայր ի կողմանս Հայոց մեծաց. և եկեալ ի սովորական տեղին, զընդելական ողջոյն սրբոյն Սահակայ և ամենայն պատահելոցն տուեալ, պատմէր նոցա վասն այնր ևս նորագործ իրացն. որք իրբեւ լուսն, առաւել գոհանային զպարդեւացն Աստությո:

Յետ այնորիկ ուշ եղեալ երկոցունց երանելեացն՝ զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և գիւրացուցանել, ձեռն ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել մեծն իսահակ՝ ըստ յառաջազպն սովորութեանն: Որոց գարձեալ գէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել ի կողմանս Ասորոց ի քաղաքն Եղեսացւոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն ի կողք գեղիէ,

Յետ այսորիկ ուշ եղեալ երկոցունց երանեացն զիւրեանց զդպրութիւնն առատացրուցանել և առաւելուլ ի թարգմանել և ի գրել ըստ յաջողութեանն Աստությոյ: Վասն որոյ առաքեն երկուս յաշակերտացն ի քաղաքն Եղեսեայ զԵղիկ և զՅովսէփ, զի յԱսորի բարբառոյն զուորբ գիրս նոր թարգմանացեն ի Հայ լեզու, և գրով աւանդեսցեն իւրեանց աշխարհիս:

զի յԱսորական բարբառոյն՝ զնոցին հարցն որբոց զաւանդութիւնս, Հայերէն գրեալս դարձուացեն:

իսկ թարգմանչացն հասեալ՝ ուր առաջեցամնն, և կատարեալ զհրամաննս, և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ զնային ի կողմանս Յունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ Հելլենական լեզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ՝ գէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս, գիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն անուն էր, և երկրորդին Կորիւնս, և մատուցեալ յարէին յԵզնիկն, իբրև առ ընտանեգոյն սննդակից ի կոստանդինական քաղաքին, և անդմիաբանութեամբ հոգեւոր պիտոյիցն՝ զինդիրն վընարէին: Որոյ յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, և բազում շնորհագիր հարց յետ այնը աւանդութեամբք, և Նիկիական և Եփեսոսական կանոնօք գային երեւելով աշխարհին Հայոց, և առաջի զնէին հարցն զբերեալ կոսականսն եկեղեցւոյ սրբոյ:

իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ յունական բարբառոյն

իսկ նոքա եկեալ կատարեցին զէրամայեալսն, և ի ձեռն հաւատարիմ եղբարց առ պատուական հարս իւրեանց առաքեցին ըզդրեանն. և ինքեանք անցեալ զնացին ի կողմանս Յունաց ի քաղաքն Բիւրզանդին յուսումն իմաստասիրութեան. որ և ուսեալ և տեղեկացեալք՝ թարգմանիչք եկեղեց ըստ Հելլենականի լըզուին:

Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցանելոյ, գէպ լինէր եղբարց ոմանց ի Հայաստան աշխարհէս, երթաւլ ի կողմանս Յունաց ի քաղաքն Կոստանդնուպոլիս, որոց անուաննն էին միունն Եւոնդ և միւսումն Կորիւն և երթեաւլք յարին յԵզնիկն, իբր առ ընտանի և մննդակից իւրեանց եղբայրութեանն. և անդէն միարանեալ զհոգեւոր պիտոյիցն ինդիք վճարէին: Յորոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, և բազում շնորհագիր հայրապետացն աւանդութեամբք և Նիկիայ և Եփեսոսի սուրբ ժողովոցն կանովաքն՝ դարձեալ լինէին յաշխարհն Հայոց և ի հայրէնիս իւրեանց. և առաջի զնէին սուրբ հարցն զբերեալ կտակարանն եկեղեցւոյ սրբոյ:

իսկ երանելոյն սրբոյն Սահակայ և Մեսրոպաց զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ ի յունարէն բարբառոյ

ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապետաց սրբոց զմարտապատում խասութիւնս յօրինեալ ի հայ լեզու: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եղնակաւ՝ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնս, հաստատէր ճշմարիս օրինակօք բերելով, և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին: Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ յընթերցուածս գրոց ծախէին հարգն՝ զտիւ և զգիշեր, և նովիմբ ծաղկեալով և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասէր առընթերակացից լինէին. մանաւանդ զի ունէին պատուիրանս զգուշացուցիչս յաստուածակարգ պատգամաւորացն. յորոց առաջնն հրամայէ՝ թէ՝ « Յօրէնս տեառն խորհեսցիս ի տուէ և ի գիշերի ». և երկրորդն հանդոյն պատուիրէ, թէ՝ « Մի՛տ գիր ընթերցուածոց միմիթարութեան վարդապետութեան, մի՛ անփոյթ առնել զնորհացդոր ի քեզ են. յայդ խորհեա և ի գոյն յամեսջիր. զայդ եթէ առնիցես և զանձն ապրեցուցես, և զայնուիկ որ քեզն լսիցեն »:

Ապա յետ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն՝ սկսեալ երանելոյն

ի հայերէն թարգմանեալ, և զբազումն և զհայրապետացն սրբոց չմարտապատում խասութիւնս յօրինեալ ի հայ լեզու: Դարձեալ յետ այսորիկ առեալ հանդերձ Եղնակաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի թարգմանեալսն՝ հաստատէր չմարտապատում օրինակօքն բերելով. և շատ եւս այլ մեկնութիւնս գրոց սրբոց՝ թարգմանէր ըստ հայերէն նշանագրացն: Եւ այնպէս զամենայն ժամանակս իւրեանց՝ ընթերցուածոց գրոց սրբոց պարապէին երանելի սուրբ հարգն զտիւ և զգիշեր. և նովին ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսումնասիրաց առընթերակացն լինէին. մանաւանդ զի ունէին եւս զպատուիրակն զգուշացուցիչսն յաստուածակարգ պատգամաւորացն. յորոց առաջնն պատուիրէ՝ Յօրէնս տեառն խորհել ի տուէ և ի գիշերի, և երկրորդն ասէ. Միտ գիր ընթերցուածոց գրոց միմիթարութեան, վարդապետութեան, մի անփոյթ առներ զնորհացդոր ի քեզ են. յայդ խորհեաց և ի գոյն կանխեսջիր, զի քոյ յառաջագիւտ միտութիւնդ ամենեցուն յայտնի լիցի. զգոյշ լինիչիր անձնդ, և ի գմին յամեսջիր, զայդ եթէ առնիցես, և զանձն ապրեցուցես և զայնուիկ որ քեզն լուիցեն:

Ապա դարձեալ յետ այնպիսի լուսաւոր վարդապետութեանն, սկսեալ երանելոյն Մեսրովքայ ճառս յաճախագոյնս, դիւրա-

Մաշխմոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումն, չնորհագիրս, բազմագիմիս ի լուսաւորութիւնէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել. լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութենական յուսոյն առ ի հանդերձեալքն՝ յերիւրեալ կազմեալ. զի հեշտընկալք և դիւրահասոյցք ախմարագունիցն, և մարմնական իրաք զբաղելոցն լինիցին, առ ի սթափել և զարթուցանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետին քաջալերել:

Եւ այնպէս զամենայն կողմանս Հայոց Վըրաց և Աղումնից, զամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զմենոն զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ իսկ, իւրով աւետարանական և ողջապատում գնացիւքն՝ առաջի թագաւորաց և իշխանաց, և ամենայն հեթանոսաց և անընդգիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին: Եւ զամենայն ոգի քրիստոսազգեստ և հոգեղին վառեաց, և բազում բանդա-

պատումն, չնորհագիրս, բազմագիմիս ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց և առաւելականաց կարգեալ և յօրինել լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան. յօրս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս աստի առ ճշմարտութիւնն ըերելով, առաւելագոյն վասն յարութեանն յուսոյն առ հանդերձեալըն յերիւրելոյ նըկարեաց, զի հեշտընկալք և դիւրահասոյցք ախմարագունիցն և մարմնական իրաք զբաղելոցն՝ ուսցին սթափել, և ի զուարթացանել և հաստահիմն առ ի խոստացեալ աւետին քաջալել:

Եւ այսպէս ընդ ամենայն կողմանս Հայոց և Վըրաց և Աղումնից զամենայն ժամանակս կենաց իւրոց զամառն և զմենոն զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ չնորոգագիր վարդապետութիւնն ուսուցանէր: Եւ իւրովի իսկ ճանապարհորդեալ աւետարանական և ողջապատումն բանիւ յաղագս հաւատոյ և վարուց առաջի թագաւորաց և իշխանաց և ռամկաց, անընդգիմաց ի հակառակորդաց ըստ տուելոյ նորա ի վերուստ չնորհէ՛ ուսուցանէր ի փառս և ի գովութիւն Աստուծոյ, և զամենայն ոգի քրիստոսասէրս և ոգէղին վառէր. և բազում բան-

կանաց և կալանաւորաց և տագնապելոց ի բռնաւորաց թողութիւն արարեալ՝ կորզեալ՝ զնոսա ահաւոր զօրութեամբն Քրիստոսի: Եւ բազում մուրհականիքաւութեան պատառեաց, և բազում սգաւորաց և կարճամուելոց՝ մխիթարական վարդապետութեան փառաց մեծին Աստուծոյ Քրիչին մերոյ Յիսուսի Քրիստոսի նօթճեաց. և զամենայն միանդամայն յաստուածպաշտութեան պայման անդ փոխեաց:

Եւ գարձեալ բազում և անհամար գունդս վանականաց, ի չէնս և յանշէնս, դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և արգելականս բնակեցուցեալ հաստատէր: Զորս ընդ ժամանակս ժամանակս իւրով մարմնովն իսկ օրինակ ցուցեալ, առեալ զոմանս յաշակերտաց յիւրաքանչիւր մենաստանացն, և երթեալ լեռնակեաց սորամուտ ծակախիթեղեալ զառօրէական զիերակուրն խոտարուտ ճա-

գականաց և կալանականաց և տագնապելոց ի պէտպէս վտանգից՝ Քրկութիւն ընձեռեաց, կորզելով զտարակուսեալսն ահաւորութեամբ զօրութեամբ փառացն Քրիստոսի՝ ի գովեստ Քրկութեան աւետարանին. և բազում մուրհակս անիրաւագիրս պատառեաց. և զբազում սգաւորս և կարճամիտս, մխիթարեաց վարդապետութեամբն, և նուաճեաց անկալութեամբ յոււոյն ի համբերութիւնն ըստ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ և Քրիչին Յիսուսի Քրիստոսի. և զամենայն հաւատացեալս միանդամայն զարս և զկանայս յաստուածպաշտութեան պայման անդ փոխագրեաց:

Եւ գարձեալ անհամար և գունդս գունդս ի չէնս և յանշէնս ի չշմարտութեան աւանդս սուրբ հարցն հաստատէր ի փառս և ի գովեստ ամենասուրբ Երրորդութեանն: Յա և ի դաշտականս և լեռնականս, անձաւամուտս և լեռնականս և արգելականս, բընակեցուցեալ կրօնաւորիւր և ի բարեպաշտութեանն ջանս, զորուչ միայն բանիւր և վարդապետութեամբ, այլ և արդեամբք զանձն օրինակ կացուցանէր միանձանց, հանապալորդ պահօք և աղօթիւք, տքնութեամբ և արտասուօք, խոնարհութեամբ և հեղութեամբ և կուսութեամբ նահատակեալ. և ընդդէմ հանապալորդեան թշնամոյն քաջապէս արիստեալ, նա և ի պատուոյ և ի փառաց խուսափեալ, երթեալ սորամուտ ծակախիթենէր, և զառօրեայ զկեանսն խոտարուտ ճաշակօք վճարէր: Եւ

շակօքն վճարէին. այնպէս վշտակեաց տկարութեան զանձն տային: Մանաւանդ որոց հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական բանիցն, թէ՝ « Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի՝ յայնժամ զօրացեալ լինիմ». և թէ՝ « Լաւ ևս լիցի պարծել տկարութեամբս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի: » :

Անդ էր այնուհետև չարբենալ գինւով, այլ առաւելու հոգւով, և պատրաստել զսիրտս երգօք հոգեւորօք, ի փառս և ի գովութիւն՝ Աստուծոյ: Անդ կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց: Անդ քաջալերութիւն յորդորական վարդապետութեան, առ ի յառաջադէմ ընտրութեանն՝ պատկահաս քրիստոսագիր կիտին: Անդ եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ: Անդ ազօթք ազերսալիք, և խնդրուածք հաշտեցուցիչք վամն ամենեցուն կենաց՝ առ մարդասէրն Աստուած, և նորին հոգեկրօն արուեստիւն՝ հանէր աւուրս բազում յանապատ տեղիս. մինչեւ աղդ մինէր յերիցանց, իրաց ինչ օգտակարաց եկեղեցեաց կող-

այնպէս վշտացեալ տկարութեան զանձն իւր տուեալ անհեղդաբար, հայեցեալ ի մխիթարութիւն առաքելական բարառուն, թէ՝ Յորժամ վասն Քրիստոսի տկարանամ՝ յայնժամ զօրացեալ լինիմ. և եթէ՝ լաւ լիցի ննալի տկարութեան, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի:

Անդ էր զուարձանալ հոգւով՝ ուր ուրեք գագարեալ լինէր. և ոչ պայծառանայր գինսով, այլ երգօք հոգեւորօք ի փառս և ի գովութիւնն Աստուծոյ: ի կրթութիւնն միշտ քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց քաջալերութիւնս յորդորականս, լուսաւոր կարդաց և տօնից զանձինս ձկնաւորացն ամենաշնորհ վարդապետութեամբն զինէր առ ի յառաջադէմ ընտրութիւն պատկահամբար քրիստոսագիր կիտին: Եւ եռայր հոգւով յաստուածպաշտութեանն մրցարան վերին կոչմանն, աղերսալի աղօթիւք և փարելի պաղաստանօք և հաշտելի խնդրուածօք յամենեցունց Տեառնէն, վասն ամենեցուն կենացն յաւիտենականաց արժանի լինել մասին սրբոցն ի լոյս: Եւ նովին հոգեկրօն վարուք կայր յանապատ տեղիս. մինչ աղդ լինէր իրաց ինչ օգտակարաց ի կողմանս կողմանս յաշակերտեալսն, յայնժամ իւ-

մանցն այնոցիկ՝ հասանել յօդնականութիւն չնորդ հօքն Քրիստոսի: Եւ նորա առանց իրիք զբաղեց՝ հանգերձ գործակցօք իջեալ ի թիկունս դիպացն պատահելոց, և վճարեալ զօրութեամբն Աստուծոյ, և յորդորագոյնս և պարարտագոյնս և ամփակ բերանով զվատակս վարդապետութեանն ի սիրտս լըսողացն ծաւալեցուցանէր: Եւ զայս առնէր զամենայն ժամանակս իւր, վասն անձին և վասն աշխարհի. քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք՝ զանձանց առաքինութիւնն՝ կանոն աշակերտելոցն դնել. մանաւանդ յուշ առնելով զտէրունականն՝ զմիոյ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ. « Քանզի սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել »: Որոյ բազում անդամ առեալ զաշակերտմն ուրոյն, և աննիազական անձամբն օրինակ կարօտելոցն լինէր. յորժամ ի Թաբօրական լերինն՝ զաւետեաց երանութիւնն տայր, և յորժամ ի նմին լերին զկանոնական զաղօթու առնէր, մինչդեռ աշակերտքն ի Տիբերական ծովուն նաւէին: Եւ դարձեալ յաւուրս բաղարջակերացն յօրինական տօնին՝ զգիշերոյն ազօթքն և ցայզոյ, ի Զիթաստանեաց լերինն առանձինն մատուցանէր: Ուստի և յայտնի իսկ է և առանց խուզելոյ, եթէ՝ ոչ վասն անձին ամենա-

ջանէր յօդնականութիւն և վշարէր զակտս պիտոյից՝ ուր հոգեւոր կարգաց էր նոււալութիւն, չնորհօքն Քրիստոսի: Եւ յորդորագոյնս և պարարտագոյնս ամփակ բերանով իմաստութեամբ զվատակս վարդապետութեանն ի սիրտս սերմանելեացն ծաւալեցուցանէր. և զայս առնէր զամենայն ժամանակս իւր երանելի վարդապետն Հայոց Մեսրովէ: Քանզի սովոր իսկ են ճշմարիտ վարդապետք զանձանց առաքինութիւնն կանովն աշակերտացն առնէլ. որպէս Քրիստոսի և Աստուծոյ մերոյ է ուսուցանել ըստ տհորէնութեանն. քանի սկսաւ, ասէ, Յիսուս առնել և ուսուցանել, և եթէ, Հայեցարուք յաւաջնորդն հաւատոց և ի կատարին Յիսուս, որ փոխանակ ուրախութեանն որ առաջի կայր յանձն էառ զիսացն, արհամարհէաց զամնթ: Եւ զինչ այս վշտաց հատուցումն ցուցանի հաւատացեալ ի Քրիստոս Յիսուս. նըստաւ, ասէ, ընդ աշմէ մեծութեանն ի բարձունս. աղէ ածէք զմուաւ որ այսպիսի համեմերութեան վասն մեր կրեաց, զի մի աշխատ լինիցմէ և լքանիցմէ ի վարս առաքինութեան. զի ոչ վասն անձին ամենատէրն զայս տոնէր, այլ վասն համաշխարհաւ-

տէրն, այլ համաշխարհի յուսումն զայն գործէր. որ է օրինակ ամենայն հնազանդելոց. վասն որոյ ասէր իսկ, « Արթուն կացէք, զի մի՛ ի փորձութիւն մտանիցէք »:

իսկ արդ եթէ թեթեւագոյն՝ արուեստից՝ պակասագոյն են ի գիտութենէ² ազգք երկրածնացս, որշափ այնմ արուեստի որ համարեսցի և անգիտանալ՝ որ ընդ Աստուծած զիսամն կատարէ. որով երանելին Պաւլոս ամենեցուն տգիտանալ ասէ, վասն որոյ զամենակեցոյց Հոգին ի թիկունս հասանել՝ անմուռնչ հեծութեամբ բարեխօս դիտէ: իսկ արդ յորժամ լսիցեմք, եթէ՝ « ակսաւ Յիսուս առնել և ուսուցանել », ապաքէն առնէ և ուսուցանէ, և ոչ եթէ զի պարգեւեսցի իմանալի է: Եւ բարեխօսել Հոդոյն սրբոյ, և բարեխօսել Հոդոյն սրբոյ առ ի վարդապետելոյ մեզ. զի ընդ միմեանց բարեխօսելի է. քանզի միապատիւ է աստուածականն և ոչ բազմաբար: իսկ երանելի առաքելոցն ընկալեալ ի վարդապետութենէ ճշմարտութեանն, նախ կարօտական անձանցն մատակարարէին, և ապա աշակերտացն բարձեալ տանէին. երբեմն առանձինն՝ և երբեմն ժողովրդովքն գումարելովք՝ զիառասն Քրիստոսի առաքելովքն բարձրացուցա-

կան գրկութեանն, յուսումն աստուածամիրաց որ ընդ նոյն ժանապարհորդէն ի հանդերձեալըն, որ են օրինակ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, որպէս ճառոք աւետարանին քարոզեն:

իսկ արդ եթէ ի թեթեւագոյն արուեստուոր և հանձարեղ իմաստից ադիտանամք, որ ընդ աստուածամիսն կատարէ զնորհացն ներդործութիւնն, որում երանելին Պաւլոս ամենեցուն տգիտանալ ասէ, այլ և յուշ առնէ զառաջնորդս կենաց բանին. Հայեցեալք, ասէ, յեւ գնացից նոցա նմանուլք եղերուք, և յուսմուն պէսպէս և յօտարաձայնս մի գանդաչէք, այլ առաքելոց և մարդարէից և երանեալ սրբոց հարցն հետեւեալ ճշմարտութեանն աւանդից զոր նոքայն հորդեցին զանսայթաք ճանապարհն յերկնից արքայութիւնն, և օրինակ աշակերտելոցն զիաւատս և զվարս բացայացեցին գրովք սրբովք, երբեմն առանձինն խատելըս իւրաքանչիւրոցն օգտի, երբեմն ի ժողովս բազմաբոխս զիառաս Քրիստոսի շնորհօք և մարդասիրութեամբ

1 Միւս օրին. է Թեթեւացնոյն

2 Միւս օրին. է Հետապնեաւ

նէին. քանզի առաւել օգտակար իսկ է՝ յամենայն աշխարհակիր զբոսանաց առանձինն սահմանել՝ և միայն աստուածպաշտութեանն պարապել, զոր և մարդարէն դորձէին. որք ի լերինս և յանապատս և ի փապարս վիմաց՝ զաստուածեղէն կրօնիցն ըգծառայութիւնսն հարկանէին :

Նյնպէս և ամենայն հարքն՝ որք յաջորդեցան, յառաքելական կանոնաց կրեալ անձամբք զլաւութիւնս բերեին վերջնոց օրինակ. ուստի երանելիս այս բարձեալ էր զաւանդելոցն պատիւ, և ամենայն մատուցելոց առ նա՝ զնոյն պատուիրեալ գուշակէր: Եւ այնպէս յառաջ՝ ամենայն աստուածեղէն գանձուցն վայելչութեամբք լցեալք, պարարտացեալք, խաղցեալք՝ դային ի բազում ժամանակս՝ նովին ի նոյն կանխեալք՝ ի նմին հանապազորդեալք:

Յայնմ ժամանակի բերեալ երեւեցան Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն ուրումն հոռոմի, որում թէոդիս անուն: Վասն որոյ սիւնհոգոսական հայրապետացն՝ եկեղեցեացն որբոց նշանակեալ աղդ առ.

Տեառն բարձրացուցանէին, և յամենայն աշխարհակիր զբոսանաց ի բաց կալ, և միայն աստուածպաշտութեան պարապել. զոր և մարդարէն և առաքեալքն յառաջադոյն գուշակեցին ըստ Պաւլոսի վկայութեանն. Երջեցան, ասէ, լաշկամաշկօք և մորթովք այծենօք, կարօտեալք, ներկեալք, չարչարեալք, յանապատի մոլորեալք և յայրս և փապարս երկրի և սոքա ամենեքեան վըկյեալք ի հաւատոցն՝ ստուգեցին զարդարութեան ճանապարհն աշակերտելոցն, որ տանի ի կետնան յաւիտենից:

Ուստի երանելիս այս Մեսրովք բարձեալ բերէր զաւանդելոցն պատիւ ի փառս ամենեցունց Տեառն, և զամենայն աշակերտեալսն իւր ի նոյն հանդէս յորդորէր. և այնպէս յառաջադէմ ամենայն աստուածահարայ վարուք և հաւատոյ վայելչութեամբք լցեալք պատրաստեալք և ամենթացեալք ի բարում ժամանակս աշակերտեալք առ ի նմանէ, նովին ի նոյն կանխեալք և ի նմին հանապազորդեալք ի փառս ամենասուրբ Երբորդութեանն:

Յայնժամ արք ոմանք հալածեալք ի ժողովշն Եփեսոսի, որում անուն էր թէոդիս, ըստ Պաւլոսի Սամաստացւոյ և ըստ Եփեսորի հերձուածոյն գիրս սուացեալ համաձայնս պարզամտացն և գիրահաւանինցն, և եկեալ յաշխարհս մեր՝ կամէին ուսուցանել զարդարական առաքեալք առաքեալ:

1 Միւս օրին. իտալացիութ:

նէին՝ ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշմոցի: Եւ նոցա ճշմարտահակի փութով զայն ի միջոյ բարձեալ՝ աշխարհահալած արտաքոյ իւրեանց մերժեցին. զի մի՛ ի լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական յարիցէ:

Յետ այնորիկ գէպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակօք, և վայելչացեալ աստուածարեր պտղոցն բարութեամբք, յառաջնումն ամի Յազկերտի որդւոյ վուամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրաւանդ գաւառի՝ ի գիւղ Բլըոցաց, ի կատարել ամնեանն նաւասարդի, որպէս և զօր ծննդեան երանելոյն յիշէին. յերկրորդ՝ ժամու աւուրբն, ի պաշտաման անուշահոտ իւղոյն, հանգերձ աստուածահամոյ աղօթիք՝ ծերունւոյն ի Քրիստոս աւանդեալ. հայեցեալ ի մարդարէին, որ ասէր, « ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ». և Ստեփաննոսի երանելոյ, որ ասէ, « Ճէր Յիսուս, ընկալ զհոգի իմ»:

Ըստ նմին օրինակի՝ և նորա ապսպրեալ զանձն և զմնացեալ՝ ամենապահ չնորհացն Աստուծոյ. զոր

թուղթս ազդ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մեսրովքյ: Եւ նոցա ճշմարտահակի փութով զկամակոր հերձուածովն ի բաց հալածեալ յիւրեանց աշխարհէն, զի մի նույն լուսաւոր վարդապետութիւնն ծուխ ինչ սատանայական մերձեցի:

Յետ այնորիկ գէպ լինէր փոխել յաշխարհէս երանելցոյն սըրբոյն Սահակայ հայրապետին Հայոց՝ ճշմարիտ վարուք և ուղափառ հաւատով լցեալ աւուրբք և երկայնակեաց ժամանակօք վայելչացուցեալ զամենայն աշխարհ Հայոց ի լուսաւոր վարդապետութիւնն, այնպէս հանդեաւ ի Քրիստոս, յաւաննում ամի Երկրորդ Յազկերտի որդւոյ Վուամայ թագաւորին Պարսից, ի Բագրեւանդ գաւառի ի գեւլն նուրբ, ի կատարել ամսոյն նաւասարդի, յերբորդ ժամու աւուրբն պաշտամանն, որ և զօր ծննդեանն ի նոյն աւուրբ: Եւ այնպէս զարբիծ հոգին սավմաներգութեամբ և աղօթիք ծերունւոյն աւանդեալ զհոգին ի Քրիստոս, ասէ. ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ, ըստ նախավային բանի:

Ըստ նմին օրինակի և նորա ապսպրեալ զանձն և զմնացեալն զիւր զհօտն ամենապահ չնորհացն Աստուծոյ յանձն արա-

և առեալ վաղվազակի ամենայն հանդերձելովք, ձեռնասուն աստուածասէր պաշտօնէիցն իւրոց. ուրոյ գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ և բարեպաշտօն, հանդերձ աստուածասէր իշխանակնաւ միով, որ անուանեալ կոչէր Դուռսոր. որ էր կին վարդանայ, զոր ի վերնոյն՝ յիշեցաք, և բազում ամբոխից սրբոց ժողովոց, բարձեալ ըդառնութեամբ և հոգեւոր բարբառով, յետ սակաւ ինչ աւուրց ընդ տիւ և լնդ գիշեր ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն իսկ գիւղն յԱշախատ: Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղ սրբոցն, հանդերձ ամենայն անուշահոտ ինկօք եղեալ և կնքեալ քրիստոսական՝ կնքովն՝ և զօրինաւոր յիշատակն ի վերայ կատարեալ, այնուհետեւ իւրաքանչիւրն դառնային: Որոց և նոյնպէս ամի ամի գումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբեն:

Իսկ երանելի զուգականին լուեալ, զՄաշխոցէ ասեմ, բազում անձկայրեաց տրտմութեամբ և արտօսրագութ ողբովք և ծանրաթախիծ սգովք պաշարեալ դնէր. զի թէ առաքեալն սուրբ, ոչ գտեալ

բեալ այնպէս փոխեցաւ յաշխարհէս: Զոր առեալ վաղվազակի պարսպէին հանդերձանօք ըստ իորհրդածութեան քահանայապետութեան թագմանն՝ իւր իսկ ձեռասուն աշակերտքն. որոյ տռաջնոյն Երեմիա անուն, այր սուրբ և երկեւզած յԱսուծոց, և այլք ընդ նմա, հանդերձ կիսաւն Վարդանայ Մամիկոննէնի. և բարձեալ զմարմին Երանելոյն բազում ամբոխիւ, եպիսկոպոսօք և քահանայիւք, սարկաւոգօք և դպրօք, սաղմոնիւք և օրհնութեամբ և երդօք հոգեւորօք՝ ածին ի Տարաւն գաւառ ի գեւլն Յաշտիշատ. և անդ ի մարտիրոսական խորանին յարկելս սըրբոցն հանգուցանէին զարբոյ առն Յասուծոց վնշխարն հանդերձ ամենայն պատուով. և կնքեալ քրիստոսանշան կնքովն, և զյիշատակ սրբոյն կատարեալ ի ֆասս և ի գովութիւն յԱսուծոց, այնուհետեւ յիւրաքանչիւրոն դաւնային. զորոյ և զտօն յիշատակի սրբոյն տօնախմբեն յերեսուն Նաւասարդի ամսեանն բազում ժողովովք. և բարեխօսութեամբ սուրբ հայրապետին զիւրաքանչիւր սգուած յամենեցունց Տեառնէն ընդունին:

Իսկ երանելոյ զուգականին զայս լուեալ զուրբը վարդապետէն ասեմ զՄեսրովքայ, տրտմեալ և տիրեալլինէր, եյարտա-

առժամայն զընդելակիցն զԾիմոթէոս՝ անհանդիստ զհոգւյն ասէ, ո՞րչափ ևս առաւել զմիանդամայն զհրաժարելոցն՝ սաստիկ կիրս մնացելոցն է համարեալ: Բայց թէպէտ և մրայնաւորութեանն արբամութիւն չժմողոյր զուարթանալ, սակայն զաւետարանական ընթացմն, և զվերակացութիւնն սրբոյ եկեղեցւոյ, նորհօքն Ասուծոց առանց պակասութեան տանէր, և առաւել փութայր զուն եղեալ՝ զամենեսեան յորդորելով առ բարեացն քայլութիւն: Եւ զցայդ և զցերեկ պահօք և աղօթիւք և ուժգին խնդրուածովք և բարձրագոյն բարբառովք՝ աստուածագիր պատուիրանացն հրամանն ուշ առներով, զգուշացուցաներով ամենայն մարդոց. մինչեւ բազմագոյնն և զգժուարագոյն վարուց կըթութիւնն. մանաւանդ զի և զմտաւ իսկ ածէր ըստ տէրունական հասակին զօր վախճանին. չտայր քան աչաց և ոչ նիրհ արտեւանաց՝ մինչև հասանել ի հանգիստն տեառն:

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւրի զհու-

սուս եղեալ վարանէր զի ինմանէ բարժանումն և զվախճան առն Ասուծոց, և զսպառումն զարմից սրբոյն Գրիգորի. և հոգովք տարակուսեալ պաշարէր առ այնպիսի աղէտս. մանաւանդ զի ոչ տեսանէր զայնպիսի զոր առ ի բարեպաշտութեան շննս և առլուսաւոր վարդապետութիւնն և առ վերակացութեան ննորհն, որ գեր ի վերոյ էր և քան զառաջննան զիւր սուրբ հարսն: Յայսուիկ մոսախոնչ եղեալ ողբերգական բարբառով վարանէր. զի ոչ զոր ունէր համաշունչ թէ ընտանեբար հոգայցէ վասն Հայաստանեայց. և ելու այսոցիկ յԱսուծուած յիշէր և միթթարէր ըստ սալուակութիւնն, որ արար զամենայն և փոփոխէ անհաս իմաստութեամբ և մատակարարութեամբ: Եւ զինքն առաւել եւս յորդորէր ի կրօնաւորութեան կարգս, համանդամանցն յալթող լիեալ էր կրօնաւորաց, ըստ երկնային կոչմանն հանդիսանալ ի բարձրագոյնն ննորհօքն Գրիստոսի առանց հեղգութեան: Եւ յորդորէր զամենայն աշակերտեամբն առ բարեացն քաջութիւնն, և յուշ առնէր ամենայն անձին զգուշանալ ամենայն անձին, ի վարս և ի գնացս խոչեմագոյն և հանձարէր խրատուք. մինչ բազմաց խիստ և ծանր և գժուար համարեալ զլարուցն կըթութիւնն: Այլնա զլերջինն մոռանայր և յառաջագէմն նկրատէր ծերունի հասակաւն, զմտաւ ածելով զմտաւոր վախճանն՝ ոչ տայր քուն աչաց և ոչ նինջ արտեւանաց մինչեւ ցօր կոչման ելանելոյ նորա յաշխարհէս:

Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւր և զհոգեւոր ե-

գեոր եռանդն ածէր, և բազում թուղթս խրատադիրս և զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր, անդէն ի նմին ամի՝ յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ, լինէր հանդերձ սրբով վարդապետով բանակն Հայոց յԱյրաբառան ի նոր քաղաք, և նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքասաններորդում ամսեանն Մեհեկանի: Եւ յորժամ որոշեալ ի միջոյ ձեռնասուն աշակերտաց և խառնեալ ի գունդն Քրիստոսի հասանէր, թեթեւացեալ և սթափեալ ի ցաւոցն՝ կանդնեալ նստաւի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարած յերկինս՝ զամէն մնացեալսն յանձն առնէր չնորհացն Աստուծոյ. վասն նոցա օգնականութիւն հայցէր:

Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն՝ են այս. առաջնում Յովսէփ, զոր և ի սկզբան գրեցաք. երկրորդին Թագիկ. արք զգաստք՝ զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն: ի զինուորական կողմանն, առաջնումն վահան անուն յազդէն Ամասունեաց, որ էր հազարապետ Հայոց

առնդն բորբոքէր յաստուածսիրութիւն, և բազում թուղթս խրատուց ընդ ամենայն գաւառսն առաքէր, անդէն ի նմին ամի յետ վախճանի երանելոյն սրբոյն Սահակայ ի վեցերորդ ամսեանն ի տասն և յեւթ մեհեկանի՝ հասանէր վախճան սրբոյ վարդապետին Հայոց, յԱյրաբառ գաւառի ի նոր քաղաքն, ի նոյն հոգեկիր կրօնս, որպէս և յառաջադոյն ասացաք, հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն՝ յետ սակաւ ինչ աւուրց հեւանդութեան: Եւ յորժամ՝ կամեցաւ Աստուծած որոշել զսուրբն ի միջյ ձեռասուն աշակերտացն, և խառնել ի գունդս սրբոյն, թեթեւացեալ և սթափացեալ ի ցաւոցն, և կանդնեալ նստաւի ժողովոյն միջի, և համբարձեալ զձեռսն հանապազատարածս յերկինս, զամենասուրբ զնորդութիւնն օրհնէր, և յանձն առնէր զաշակերտեալսն ամենապահ չնորհացն Աստուծոյ, զի կայցեն հաստուառն ի հաւատաւ և ի վարս ուղղութեան, և առանց գայթակութեան կատարեսցեն զարդարութիւն սուրբ հարց մերձաւորաց Քրիստոսի:

Եւ անուանք գլխաւոր աշակերտացն ժողովելոցն առ նա, են այս. առաջնումն Յովսէփ, և երկրորդումն Թոդիկ, արք զգաստք և զգուշագոյնք. իսկ ի զնուորացն՝ առաջնումն Հմայեակ՝ ի

մեծաց. և երկրորդին Հմայեակ՝ ի Մամիկոնեան տոհմէն, արք պատուականք երկիւղածք հրամանաւկատարք վարդապետական հրամանաց: Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսուի սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր. զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, և ոչ առ յընկերէ պատմեալ: Եւ սորտ սրբոցն զսէր և զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս և զինուաւորս օրհնութեամբ պատկէր, և զհաճոյական ազօթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեալ:

Զոր առեալ Վահանայ և Հմայեակի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ, և հոգեւոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և ամենայն լուսաճաճանչ գնդիւն, և այնու խաչանշան լուսաւոր առաջախաղաց նշանաւն, յՕշականն ելանէին, և անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, ապանշանն աներեւոյթ լինէր, և նոքա իւրաքանչիւր դառնային: իսկ յետ երից ամաց անցելոց, յաջողեցան վահանայ Ամասունեաց, քրիստոսակոչ ի փութով իսու-

Մամիկոնեան տոհմէն, և երկրորդին Վահան՝ յազդէն Ամասունեան տոհմէն պատութեամբ Հայոց մեծաց. աստուածաելք և երկիւղածք յԱստուծոյ: Եւ մինչդեռ ձեռք սրբոյ վարդապետին ընդ երկինս կարկառեալ կայր, տեսուի սքանչելի և խաչանշան լուսաւոր շողաձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր. զոր և ամենայն ուստիք ինքնատես լեալ և ոչ յընկերէն պատմեալ: իսկ սրբոյն զնիրոյ և զմիաբանութեան պատուիրանն ամենդեալ, և զինուաւորս զմերձաւորս օրհնութեամբ պատկէալ, և զհաճոյական ազօթս հասուցեալ ի Տէր, անդէն վաղվաղակի աւանդեաց զհոգին ի փառս ամենասուրբ Երրորդութեամն:

Զոր առեալ Հմայեակ և Վահանայ կազմութեամբ վախճանէլոց, հանդերձ աշխարհագուղով ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբ և երդօք հոգեւորս, մամելինօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և անուշահոտ ինկօք, և այնու խաչանշան յառաջաղաց լուսաւոր նշանաւն յԱւաչական ելանէին, և անդ ի մարտիրոսական յարկն հանգուցանշին զսուրբ այրն Աստուծոյ, և զօրինաւոր տօն յիշատակի երանելոյն կատարէին: Ապան նշանն

բան սքանչելի կանգնել, տաշածոյ վիմօք քանդակելով, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յօրինեալ, որոյ սպասս վայելուչս գունագոյնս պայծառատեսիլս ուկով և արծաթովիլ և ակամբքպատուականօք՝ ի յիշատակարան սեղանոյն կենդանարար մարմոյ և արեանն Քրիստոսի պատրաստեաց, և ամենայն սրբովք ի միասին գումարելովք խաչակրօն վկայիցն Քրիստոսի, հանգերձ երանելեաւն Մաշթոցիւ, ի հանգիստ խորանին փոխէ: Եւ զնորին աշակերտ Թագիկ անուն՝ զայր զգաստ և բարեպաշտօն, հանգերձ եղբարբք երանութեանն հասնելոց՝ սպասաւոր սրբոցն ի վառս Աստուծոյ կարգէին, և գլխաւորս, վերակացուա տեղապահս յայտարարեալ հարցն կատարելոց՝ որոց առաջինն Յովոէփ գլխաւոր ժողովոյն, և երկրորդն այլ աշակերտ Յովհան անուն. այր իսկ սուրբ վարդապետասէր և ճշմարտապատում: Որում գէպ լինէր յետ վախճանի սրբոյն, բազում և ազգի ազգի փորձութեանց և կապանաւոր վըշտաց. մենամարտիկ երկպատական բոնութեանն ի Տիգրոն քաղաքի, վասն

աներեւայթ լինէր, և նոքա յիւրաքանչելր տեղիս գաւնային, փառաւորելով և օրհնելով զԱստուած ի վերայ սքանչելեացն զոր Տէր եցոյց ի վերայ վարդապետին:

Իսկ յետ ամսոց երից լնցկուց ըստ յաջողելցն Աստուծոյ Վահանայ ամառունուց քրիստոսամիրի՝ կսմեցաւ տաճար փառաց անուանն Աստուծոյ շնուր յանուն սրբոյ վարդապետին, ի տաշածոյ վիմաց սքանչելցապէս յօրինեալ խորանս և գեղեցկապէս կազմեալս. և անգ ի ներքանչելոյն իորանին զարբոյն հանգիստն առնել, և վայելուչ պասուք ոսկով և արծաթով և ակամբք պատուականօք զտունն Աստուծոյ և զսեղան կենարար մարմոյ և արեանն Քրիստոսի զարդարէք: Եւ լիորին աշակերան զգաստ և բարեպաշտօն զԹոգիկ՝ սպասաւոր նորին կացուցանէին՝ սյլ եւս եղբարբք կատարել զհանապաղորդ պաշտօնն: Եւ որ վերակացուա ժողովրդեանն ըստ յայտնութեան սուրբ հարցն՝ զՅովոէփ և զՅովհան կացուցանէին արս Ճշմարտասէրս և ողջախոհս. որոց գէպ լինէր յետ վախճանի սրբոցն ազգի ազգի փորձութեանց ի վերայ եկելոց ի բռնաւորաց, մենակուիւ մենամարտիկ

1 Յօրին. Եր ըստ յայտնաբերութեան կարդուակերէն. եկաւ ըստ Միւս օրին:

Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վամն որոյ և զիսոստովանողական անուն ժառանգեաց. ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց :

Իսկ բարեացապարտին Վահանայ, յանկարծահաս կենաց ամենեցուն լինէր. որ աշխարհածնիւն հայրենեացն սեպհական ոգի գտեալ, նորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, մերձաւոր կենակից վայելէր. և զի ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ հարքն ի կափարումն գարձան:

Ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենադրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն և առընթերակաց հոգեւորական գործոց, և լոոլ նորհապատում վարդապետութեանն, և նոյնին արբանեակ ըստ առետարանական հրամանացն: Ոչ սուտապատումն ճարտարախօսուուս եղեալ առ ի մերոց բանից զհօրէն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնն թողեալ, և ի նշանադիմակացն քակելով զհամաստուրմն կարգեցաք, որք ոչ միայն մեզ, այլ և որ զատեանսն ընթեռնուն յայտնի է: Քանզի չէաք իսկ հանգուրժողք՝ զամե-

թ Պարս ի Տիսպովն քաղաքի վասն Քրիստոսի, յաղթութեամբ բաղմաւ. որոց և զիսոստովանողական անուն ժառանգեալք, ի նոյն վերակացութիւնս վարդապետութեան գառնային յերկիրս Հայոց:

Իսկ բարեացապարտն Վահան յանկարծահաս կենաց, առ պլուական ցանկալի ամենայն սրբոց լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն սեպհական ոգի գտեալ նորհօքն Քրիստոսի մերձաւոր կենացն յաւելունց լինէր:

Եւ արդ ըստ օրինակի գրելոցս առ ի մէնջ զերանելեաց սուրբ հարցն զվարս և զվարման փոքր ինչ պատմելով ի կատարումն զբանս ածից. ոչ եթէ ի հին համբաւուց զրուցաց տեղեկացեալ և մատենադրեալ զսա կարգեցաք, այլ որոց մեզէն իսկ ականատես կերպարանացն և առընթերակաց հոգեւորական գործոց սրբոցն, և լոոլք նորհապատում վարդապետութեանն, և նոյնին սրբոց վարդապետաց արբանեակ ըստ նոյնին աւետարանական հրամանաց. ոչ առ սուտապատում յարմարեալ զբանս ի մեր գոլսւթիւն զհայրենին յարգելով, այլ զյաճախագոյնն թողեալ զառաքինեացն չանդէս, որ այժմ ծածկեալ է ի Քրիս-

1 Միւս օրին. է յայտնաւում:

նայն արարեալն կտակաւ զիւրաքանչիւրսն. այլ ի դիւրագոյն և ի հեշտագոյնս, յառաքելական անդր զանձինս պատապարեցաք. որոյ անցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն, առ ի մանրակափառ առնելոյ զկարեւորագոյնս պատմելոյ՝ զհանդամանս՝ ասացաք, ոչ ի պատիւ ինչ սրբոցն Աստուծոյ, որք ամենապարծ և կենդանատուր իսաչիւն ծանուցեալք յարգեցան, այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծնընդոց իւրեանց, և որք նորօք աշակերտելոց իցեն յազգո ազգաց:

Եւ արդ լինի համար հաւասոց երանելոյն ամք քառասուն և հինգ, և ի դպրութենէն Հայոց մինչեւ ցվախճա՞ սրբոյն՝ ամք երեսուն և հինգ, որք համարին այսպէս: Թագաւորեալ Դիսմոնայ Պարսից արքայի ամս վեց, և Յազկերտի ամս քսան և մի. և յառաջնումն ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, վախճանեցաւ երանելին: Եւ արդ առնու համար ամաց սրբոց հաւասոց ի չորրորդում ամէն կրմանայ արքայի, մինչեւ ցառաջին ամս երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ, և դպրութեանն Հայոց յութերորդ ամէ Յազկերտի առեալ սկիզբն: Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:

տոս և յայնժամ ընդ նմա յայտնեսցի փառօք, յորժամ գայցէ փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց: Այլ սուլ ինչ ի նշանաւոր գիտակացն պատմելով՝ զշամաւոսս պատմեցաք. որք ոչ մէզ է շահս, այլ և որք զմուտեանս ընթեռնուն, յայտնեսցի արանցն քաջութեւն: Քանդի և ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոյն դրով նշանակել զիւրաքանչեւրսն, այլ ի դիւրագոյնն և ի հեշտագոյնն զանձինս պարագեսցաք, և զմիցեալ զբազմախուռն արգասեօք սրբոցն առ ի մանրակրկիտման առնելցյ թողաք, և զկարեւորագոյնն սուլ ինչ մատենագորեցաք ըստ մերում կարի, ոչ ի պատիւ ընտրելոցն մերձաւորացն Քրիստոսի, որք ամենապայծառ հաւասով և վարուք ծանուցեալք՝ եղէն, այլ յօրինակ քաջալերիչ հոգեւոր ծննդոց իւրեանց, և որոց նորօք աշակերտելոց իցէն զՃմարտութիւն յազդս իւրեանց՝ աւանդեցաւ այս, ի փառս ամենասուրբ ներորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւետնից: ամէն:



ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

- Ազքանազեան. Ապանազեան Եդեսիա. 48:
- ազգ. 7: Եղնիկ. Եղնակ. 52, 55, 54:
- Ակակիոս Եպսկ. 18, 27: Ենովլք. 50:
- Ակումիտ. 27: Եպիփան. 49:
- Աղուանք. 25, 50, 51: Երեմիա. 41, 42:
- Ամատունեաց ազգ. 44: Թագիկ. Թոդիկ. 44, 46:
- Ամիդ. Ամիթ. 18: Թէոդիոս. Թէոդորոս հերձուածուլ. 40:
- Այրարատ. 20, 23, 52: Թէոդոս. 20, 27:
- Անանիաս Եպսկ. 24: Խորձենական գւռ. 24:
- Անատոլ. Անատոլիս 27, 28: Խուռս իշխան Գարգմանից. 51:
- Աշուշայ. 52: Կայենականք. 26:
- Աշտիշատ. 44: Կոստանդինական քաղաք,
- Ասորիք. 18, 20, 52: Կոստանդինուպոլիս. 27, 55
- Ատամիոս. 27: Կորիւն. 55:
- Արամ, Երկիր. 48: Կրամ. 48:
- Արքադ. 27: Հաբէլ. 47:
- Արձիւլ, Թգր. գրաց. 52: Հայաստան ազգ. 46:
- Ասրվաղ. Սրովաղէ. Թգր. 50: Հայաստան. 20, 23, 55: 40:
- Արտաշէս, Թգր. 50: Հայք. 14, 17, 18, 20, 22, 23,
- Բաբելոն Եպսկ. 48: 26, 28, 50, 51, 52, 55, 41,
- Բագրաւանդ. Բագրեւանդ. 44,
- Բակուր Թգր. Վրաց. 25: 45, 47, 48:
- Բարբարիանոս. Բորբորիանոս Հացեկաց Գիւղ. 15:
- աղանդ. 29: Հմայեակ Սամիկոնեան, 44,
- Բենիամին Երեց աղուան. 29: 45:
- Բլրոցաց Գիւղ. 44: Հոռոմը. 26,
- Գարդման. 51: Հոռոմիանոս. Ռուդինոս. 49:
- Գարդմանական ձոր. 51:
- Գինթ Եպսկ. Գերջանոյ. 27:
- Գիւտ Սիւնի. 24:
- Գողթն. 15, 24:
- Գրիգոր լուսաւորիչ. 45:
- Գանան. 50:
- Գանիել ասորի Եպսկ. 17:
- Գիսմոն. 48:
- Գոււստոր. 44:
- Մամիկոնեան որեար. 25:
- Մամիկոնեան տոհմ. 45:
- Մաշոոց. 15, 18, 19, 20, 24,
- 25, 27, 28, 55, 54, 58, 40,
- 44, 49, 46:
- Մարք. 16, 24:

ՄԵԼԻՄԻՆՀ . 27 :
ՄԵՍՐՈԱԿ ՏԵԽ ՄԱՀՄՈՒ
ՄԵՐՈՆՔԱՆ . 28 :
ՄԻՋԱԳԵՐԱՔ . 17 :
ՄՈՎՀԵ , ՄՈՎՀԵՂ . 24 :
ՄՈՎՀԵՂ Էպսկ . 31 :
ՄՈՎՄԵԽ Էպսկ . Վրայ . 23 :
Յաղկերտ . 41 , 48 :
Յոյնք . 26 , 53 :
Յովհան ԵԿԵՂԵԿԱԳԻ . 49 , 46 :
Յովհաթան բհնյ . 34 :
Յովհէփ աշակերտ . 8 , 19 , 52 ,
44 , 46 :
Ներբոս . 9 :
Նեստոր . 40 :
Նոր քաղաք . 20 , 50 , 44 :
 $\begin{cases} Կաբաթ \\ Կամբիթ \end{cases}$ } իշխ . Գողթնեաց .
15 , 24 :
Պաղանական տուն . 19 :
Պարսք . 41 , 48 :
Պաղայ . 26 :
Պահ . 24 :
Սահմանական տուն . 43 , 44 :
Տաշերք . 52 :
Տէր Էպսկ . 24 :
Տիղոն . Տիսպոն . 46 , 47 :
Տիրայր Խորձենացի . 24 :
Ոշտական . 43 :

Սահմակ պարթեւ . 17 , 18 , 20 ,
25 , 26 , 27 , 50 , 52 , 55 ,
44 , 44 :
Սամուէլ Էպսկ . 26 , 52 :
Սամուստական քաղաք . 18 :
Վահան Ոմատունի . 44 , 45 , 46 ,
47 :
Վահրիճ . 17 :
Վաղենակ իշխ . Ոիւնեաց . 24 :
Վասակ Ոիւնի . 25 :
Վարդան հայր Օ . ՄԵՍՐՈԱԿԱՅ .
15 :
Վարդան կամ Վարդկան Մա .
միկոնեան . 25 , 27 , 42 :
Վիրք . 26 , 51 :
Վասմ . 41 , 48 :
Վասմակուհ . 17 , 18 , 20 :
Տարօնական գւռ . 43 , 44 :
Տաշերք . 52 :
Տէր Էպսկ . 24 :
Տիղոն . Տիսպոն . 46 , 47 :
Տիրայր Խորձենացի . 24 :
Ոշտական . 43 :

ՀՀ Ազգային գրադարան



NL0246820

